

891.71-3

U-91

4238

Լուսինյան

Լուսինյան

1952

891.71

U-91

Լուսինյան

1952

12003







89741-3  
U-91 47  
ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 179

363

Կ. Մ. ՄՏԱՆԻԿՈՎԻՉ

# Մ Ա Ք Ս Ի Մ Կ Ա

Թարգմանիչ

Ա. Մ Ի Ի Թ Ա Ր Ե Ա Ն

№ 6 ՀՐԱՏԱՐ. Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ ԳՈՒՄԱՐՈՎ. № 6



Տպարան Կ. Վարդանանյան

Типография М. Вартанянца, Вельям. ул. д. № 7.

1900

2011



1269

Доз. Цензурою Тифлисъ, 28-го Марта 1900 г.

## Մ Ա Ք Ս Ի Մ Կ Ա

Չանգակը նոր էր խփել. Ատլանդեան ուկրիանոսում արեադարձային հրաշալի առաւօտուայ ժամի 6-ն էր:

Բաց-կապտագոյն, անսահման բարձր և քնքոյշ-թափանցիկ երկնակամարի վրայ, որ տեղ տեղ ծածկուած է, ձիւնափայլ ասղնադործի նման, մանրիկ, փետրաւոր ամպերով, բարձրանում է արևի կիզող ու կուրացնող ոսկեվառ գունտը՝ սփռելով իւր ուրախ ճառագայթներն ովկիանոսի ջրային, բլրանման մակերևոյթի վրայ: Հեռու հորիզոնի կապույտ չլիփալնակները սահմանափակում են ովկիանոսի անհուն տարածութիւնը:

Չորս կողմը մի տեսակ հանդիսաւոր լուծիւն է տիրում:

Միայն հզօր երկնագոյն ալիքները, արևի տակ փայլեցնելով իրանց արծաթագօծ կառարներն և առաջ մղելով մէկը միւսին՝ հանդարտ ծփում են այն փաղաքշող, համարեա քնքոյշ ծփանքով, որ կարծես, չչնջում է մարդու ականջին, թէ լայնութեան այս արեադարձային աստիճաններում յաւիտենական ծերուկ-ովկիանոսը միշտ բարի, միշտ խաղաղ տրամադրութեան մէջ է:



Ձգուշութեամբ, որպէս մի հոգատար քնքոյշ խնամակալ, կրում է նա իւր հսկայական կրճէի վրա-  
լողացող նաւերը՝ չսպառնալով ենթարկել՝ ծովագնա-  
ցներին ոչ փոթորիկներին և ոչ խստաշունչ հողմերին:

Դատարկ է չորս կողմը:

Ձէ երևում այսօր սպիտակին տուող ոչ մի ա-  
ռազաստ, չէ երևում ոչ մի ծուխ հորիզոնում: Ուկիա-  
նական մեծ ճանապարհը լայն է շատ:

Երբեմն երբեմն արևի տակ իւր արծաթագոյն  
թեփուկներով փայլում է թռչող ձկնիկը, խաղացող  
կէտը ցոյց է տալիս իւր սև մէջքն և աղմուկով ջրի  
շատրոնան է արձակում, բարձր ճախրում է օդի մէջ  
ձկնկուլը կամ ձիւնափայլ սպիտակահաւը, անցնում  
է ջրի երեսից փոքրիկ մոխրագոյն ջրասողը, դիմելով  
դէպի Աֆրիկայի կամ Ամիրիկայի հեռաւոր ափերը:  
Ու դատարակ է նորից: Նորից նոյն շաշող ուկիանո-  
սը, արևն ու երկինքը—բոլորն էլ պայծառ, փայլա-  
յող ու քնքոյշ:

Թեթևակի տատանուելով ուկիանոսի ծփանքի  
վրայ՝ ռուսաց զինուորական չորհրդարժ «Վուաբար»  
նաւն արագութեամբ գնում է դէպի հարաւ, հեռա-  
նալով աւելի ու աւելի հիւսիսից, մույլ տխուր, բայց  
և այնպէս միշտ մօտիկ, միշտ թանկագին հիւսիսից:

Ոչ այնքան մեծ, ամբողջովին սև, վայելչակազմ  
ու զեղեցիկ, իւր երեք հատ բարձր, փոքր ինչ դէ-  
պի յետ թեքուած կայմերով, որոնք վերևից մինչև  
ներքև ծածկուած են առագաստներով: «Վուա-  
բար»-ը վազում է իւր համար մի ժամում և օթ-ութ  
մղոն բարեյաջող, միակերպ, միշտ միևնոյն ուղղու-  
թեամբ փչող հիւսիս-արևելեան պասսատի հետ՝

թեթևակի ծռուած դէպի այն կողմը, որտեղից փչում  
է քամին: Հեշտութեամբ ու շնորհալի վայելչութեամբ  
բարձանում է «Վուաբար»-ը մի ավելից միւսի վրա,  
ցածրաձայն աղմուկով պատառում է նրանց իւր  
սուր ջրահերձ կրճքով, որի շուրջը փրփրում է ջուրն  
ու ցրիւ գալիս, որպէս ալամանդեայ փոշի, ավելները  
փաղաքարաբար լիզում են նաւի կողերը: Նաւի յետևից  
լայն արծաթագոյն ժապաւէն է ձգուում:

Տախտակամածի վրայ ու ստորնայարկերում  
կատարուում է նաւի առաւօտուայ սովորական մաք-  
րումն ու հաւաքումը, որպէս զի ամեն ինչ պատ-  
րաստ լինի դրօշակը բարձրացնելիս, այսինքն առա-  
ւօտուայ ժամի 8-ին, երբ սկսուում է օրը զինուո-  
րական նաւի վրայ:

Յրուած տախտակամածի վրայ իրանց սպիտակ  
բանուորական շալիկներով, լայն յետ ձգուած կա-  
պոյտ օձիքներով, որոնց տակից երևում են ջղուտ,  
արևառ պարանոցներ, նաւաստիները ոտաբորիկ,  
մինչև ծնկները վեր քաշած անդրավարտիկներով,  
լուանում, քերում ու մաքրում են տախտակամածը,  
նաւեզրները, թնդանօթներն ու պղինձը, մի խօսքով՝  
կտրդի են բերում «Վուաբար»-ն այն մանրակրկիտ  
ուշադրութեամբ, որ ցոյց են տալիս նաւաստիներն  
իրանց նաւը հոգալու ժամանակ, ուր ամեն տեղ,  
սկսած կայմերի ծայրերից մինչև ստորնայարկը,  
պէտք է ամրիծ մաքրութիւն թագաւորէ և ուր  
ամեն բան, որ կարող է ենթարկուել աղիւսի, մա-  
հուղի և սպիտակ դեղի ազդեցութեան, պիտի փայլէ  
ու պսպղայ:



Նաւաստիներն եռանդով աշխատում և ուրախ ծիծաղում էին, երբ «լայնակոկորդ» աւազ ենթասպայ Մատվէիչը—մի հինաւուրց ծառայող, հին ժամանակի ենթասպաներին յատուկ՝ թէ՛ արեւից, թէ՛ ծովափնեայ կերուխումից կարմրած դէմքով, դուրս ընկած մոխրագոյն աչքերով,—ւցնորուելով» ինչպէս ասում էին նաւաստիները, նաւը «հոգալու» ժամանակ՝ սկսում էր ուրեիցէ, արդէն չափից դուրս տարօրինակ, հայհոյական ճառ արտասանել, որ ծակում էր մինչև անգամ ուռւ նաւաստու հայհոյանքի սովորականջը։ Մատվէիչը հայհոյանքներ էր թափում ոչ այնքան նաւաստիներին եռանդի բերելու, այլ աւելի «կարգը» պահպանելու համար՝ ինչպէս ասում էր ինքը։

Ոչ ոք դրա համար չէր բարկանում Մատվէիչի վրայ։ Բոլորը գիտեն, որ Մատվէիչը բարի ու արդարասէր մարդ է։ Իրար զցել մարդկանց չէ սիրում և 'ի չարը չէ գործ դնում իւր դիրքը։ Ամենքն էլ վաղուց սովորել են այն բանին, որ նա չէ կարող երկու խօսք ասել առանց հայհոյանքի և երբեմն նոյն իսկ հիանում են նրա հայհոյանքի անսպառ զանազանակերպութեամբ։ Այս բանում Մատվէիչը, յիշաւի, վարպետ էր։

Ժամանակ առ ժամանակ նաւաստիները վազում էին տախտակամածի առաջակողմը, ջրով լի կիսատակառի և արկղի մօտ, ուրի մէջ պատրոյգ էր հուրհուրում, շտապով մի ծխամորճ թուեղ մախօրկայ քաշելու և մի-երկու խօսք խօսելու իրար հետ։ Յետոյ նորից սկսում էին մաքրել ու բանալ սղիւնձը, փայլ տալ թնդանօթներին, լուալ-սրբել նաւեղրներն և մի

առանձին եռանդով աշխատում էին մանաւանդ այն ժամանակ, երբ մօտենում էր աւազ սպայի նիհար ու բարձրահասակ մարմինը, որ վաղ առաւօտից չըջում էր նաւի վրայ ու դիտում երբեմն այս, երբեմն այն բանը։

Հերթապահ սպան, մի սպիտակագէտ երիտասարդ, որ ժամը չորսից մինչև ութը պէտք է կատարէր հերթապահութիւնը, վաղուց արդէն վանել էր աչքերից հերթապահութեան առաջին կիսաժամի նինջը։ Ամբողջովին սպիտակ շորեր հագած, գիշերաօրին չապկի կուրծքը բաց արած, ման է դալիս նա յետ ու առաջ փոքրիկ կամրջի վրայ, լի ու լի ներշնչելով առաւօտուայ թարմ օդը, որ դեռ ևս չէ տաքացել արևի կիզող ճառագայթներից։ Բնքոյչ քամին հաճելի գուրգուրանքով փայփայում է երիտասարդ լէյտենանտի ծոծրակը, երբ նա կանգ է առնում նայելու կողմնացոյցին, թէ քամու ուղղութեամբ են արդեօք կառավարում ղեկավարները, կամ նայելու առաջաստներին, թէ լաւ են արդեօք նրանք կանգնած, կամ հորիզոնին, թէ չկայ արդեօք մի տեղ մըրկաբեր ամպիկ։

Բայց ամեն ինչ լաւ է ու կարգին. և լէյտենանտը, համարեա, ոչինչ չունի անելու իւր հերթապահութեան ժամանակ արեւագարձային այս օրհնեալ աստիճաններում։

Սև նա նորից ման է դալիս յետ ու առաջ և չափազանց վաղ երազներ է տեսնում այն ժամանակակի մասին, երբ հերթապահութիւնը կվերջանայ և նա մի-երկու բաժակ թէյ կիսէ թարմ ու տաք չաքարահացով, որ այնպիսի վարպետութեամբ թխում



է սպաների խոհարարը, եթէ այն օղին, որ նա ստանում է խմորը բարձրացնելու համար, չածէ իւր որկորը:

## II

Յանկարծ տախտակամածի վրայ լսուեց հերթապահ զինուորի անբնական—բարձր ու չարագուշակ աղաղակը, այն զինուորի, որ նաւի առաջակողմը նստած, դիտում էր ովկիանոսը:

—Մարդ կայ ծովի մէջ:

Նաւաստիները մի վայրկեանում վայր ձգեցին իրանց աշխատանքները և զարմացած ու վրդովուած վազեցին դէպի նաւախելն ու սեւեռեցին աչքերն ովկիանոսին:

—Ո՛ւր է, ո՛ւր, հարցնում էին չորս կողմից հերթապահին, մի երիտասարդ սպիտակահեր նաւաստու՝ ոյի դէմքը յանկարծ պատի կրի նման գունաթափուեց:

—Ս՛, այնտեղ, դողդոջուն ձեռքով ցոյց էր տալիս նաւաստին... —Հիմա ծածկուեց: Քիչ առաջ տեսնում էի, տղերք ջան... Կայմի վրայ էր... ով դիտէ, կապած էր, վրդովուած ասում էր նաւաստին, զուր ջանք անելով գտնելու այն մարդուն, որին հէնց նոր միայն տեսել էր:

Հերթապահ լէյտենանտը ցնցուեց զինուորի աղաղակից և աչքերն հեռադիտակին կպցրած՝ նայում էր նաւի առաջ գտնուող տարածութեան վրայ:

Նշանացոյց նաւաստին նայում էր նոյն տեղը, մի ուրիշ միափող դիտակով:

—Տեսնո՞ւմ ես, հարցրեց երիտասարդ լէյտենանտը:

—Տեսնում եմ, ձերդ աղնութիւն... բարեհաճեցէք դէպի ձախ ուղղել հեռադիտակը:

Բայց այդ վայրկեանին սպան էլ տեսաւ ալիքների մէջ մի կայմի կտոր և նրա վրայ մարդկային կերպարանք:

Նւ սուր ու դողդոջուն, շտապ ու ջղային ձայնով՝ նա աղաղակեց իւր առողջ թոքերի ամբողջ ուժով:

—Սուր՛ (կանչել) բոլորին դէպի վեր: Միջին ու առաջին կայմերի ստորին առաքաստներն հաւաքել ու նաւակ իջեցնել:

Եւ դառնալով դէպի նշանացոյց նաւաստին աւելացրեց.

—Աչքից մի՛ կորցնիր մարդուն:

—Գնացէ՛ք բոլորդ դէպի վեր, գոռաց խզխզուն, հաստ ձայնով աւագ-ենթասպան սուլիչը փչելուց յետոյ:

Նաւաստիները, խելագարների նման, վազեցին իրանց տեղերը:

Նաւասպետն ու աւագ—սպան արդէն բարձրանում էին կամրջի վրայ: Քնաթաթախ սպաները սանդուխներով վեր էին գալիս դէպի տախտակամածը, ճանապարհին հագնելով սպիտակ վերնագգեստները:

Աւագ սպան յանձն առաւ հրամանատարութիւնը, որպէս միշտ լինում է այն դէպքերում, երբ նաւի բոլոր ծառայողները պարտաւոր են մասնակցել որեւէ աշխատանքի: Եւ հէնց որ հնչեցին նրա բարձր, կարճաօտ, հրամայողական խօսքերը՝ նաւաստիներն սկսեցին կատարել այդ հրամանները մի տեսակ տենդային եռանդով: Ամեն ինչ կատարուում



էր զարմանալի արագութեամբ: Իւրաքանչիւր ոք, կարծես, հասկանում էր, թէ որքան թանգ է ամեն մի վայրկեանը:

Ջանցաւ նոյն իսկ և օթ ըստէ, որ, համարեա, բոլոր առաքապոսները, բացի երկու-երեքից, արդէն հաւաքուած էին: „Սուրարար“ -ը կանգ առաւ և անշարժ տատանուում էր ուկիլանոսի մէջ տեղը: Նաւակը տասնուկից թիաւարների և մի դեկավար սպայի հետ միասին վայր էր թողնուած արդէն ջրի մէջ:

— Տէր ընդ ձեզ, ազադակեց կամըջից նաւապետը՝ զիմելով հեռացող նաւակի մէջ նստածներին: Նաւաստիներն ամբողջ ուժով թիաւարում էին, շտապելով ազատել մարդուն:

Բայց այդ օթը ըստէում, մինչև նաւի կանգ առնելը, նա կարողացել էր անցնել մի մղոնից աւելի և հեռագիտակով անգամ չէր կարելի տեսնել ոչ կայմի կտորն և ոչ մարդուն:

Այսուամենայնիւ կողմնացոյցով նկատեցին այն ուղղութիւնը, որով դնում էր կայմի կտորը և այդ ուղղութեամբ էլ թիաւարում էին նաւակը՝ հեռանալով „Սուրարար“-ից:

„Սուրարար“-ի բոլոր նաւաստիների աչքերն ուղղուած էին նաւակին: Ինչպիսի չնչին կճեպի էր նմանում նա, երբեմն երեւալով ուկիլանական մեծ ալիքների կատարների վրայ, երբեմն ծածկուելով նրանց հետ միասին:

Քիչ յետոյ նա արդէն մի փոքրիկ սև կէտ էր թւում:

### III

Տախտակամածի վրայ լուռ թիւն էր թաղաւորում:

Միայն երբեմն նաւաստիները, որոնք իրար սեղմուած՝ կանգնած էին նաւի յետին կողմում, խօսակցում էին միմեանց հետ կիսաձայն, կարճ նկատողութիւններով:

— Նրեի, որնէ կործանուած նաւի նաւաստի է:

— Դժուար թէ նաւ կործանուի այստեղ: Հնա, եթէ բոլորովին անպէտք նաւ լինի, այն ժամանակ կարելի է. .

Ձէ, երևում է, մի ուրիշ նաւի է զիպել գիշերով. . .

— Գուցէ և այրուել է:

— Նւ բոլորից մի կենտ այդ մարդն է մնացել, տղերք ջան:

— Նարելի է, միւսներն ազատուել են նաւակներով, իսկ զբան մուացել են. .

— Տեսնես կենդանի է դեռ:

— Զուրը տաք է, կարելի է որ կենդանի լինի:

— Նւ ինչպէս է պատահել, տղերք ջան, որ գայլաձուկը չէ կերել զբան: Այստեղ թիւ ու համար չկայ այդ անպիտան գայլաձկներին:

— Հը՛ր, ձեր հոգուն մատաղ, տղերք ջան, վախենալու է շատ այս ծովային ծառայութիւնից. ճհ, ինչպիսի երկիւղալի ծառայութիւն է, հառաչանքը զսպելով՝ բացականչեց մի բոլորովին ջանել, թխտդէմ, ականջից գինտ կախ արած նաւաստի, որ



առաջին տարուայ ծառայող էր և որ գութանից բաժանուելով, անմիջապէս շուրջերկրեայ ճանապարհորդութիւն էր սկսել:

Սե տխրութեամբ մուայլուած դէմքով՝ նա հանեց զլխարկն ու առանց շտապելու սկսեց խաչակընքել երեսը, կարծես, անձայն աղաչելով Աստծուն, որ նա փրկէ իրան այդպիսի զարհուրելի մահից մի օրէն տեղ ուկեանոսում:

Նրեք քառորդ ժամ անցաւ արդէն այն ըրպէից, երբ ամենքն անձկութեամբ սպասում էին նաւակի վերադարձին:

Վերջապէս նշանացոյց նաւաստին, որ աչքերը չէր հեռացնում դիտակից, ուրախացած աղաղակեց.—

— Նաւակը յետ դարձաւ:

Նրբ նաւակն սկսեց մօտենալ՝ աւագ-սպան հարցրեց նշանացոյց նաւաստուն.

— Ազատուած մարդ կայ նաւակում:

— Չէ՛ երևում, ձերդ ազնուութիւն, ոչ առաջուայ պէս ուրախ պատասխանեց նաւաստին:

— Երևի, չեն գտել, ասաց աւագ սպան մօտենալով նաւապետին:

»Պառարար«-ի նաւապետը, որ մի ցածրահասակ, լայնաթիկունք, պնդակզմ, արդէն տարիքաւոր թուի մարդ էր, որի մայից այտերն ու կզակը ծածկուած էին սաստիկ երկարացած խիտ ու սև, տեղ-տեղ չալ ընկած ու ցցուած մազերով, և որի փոքրիկ, կլորիկ աչքերը նոյնչափ սրտես էին, որքան և բազէինը, դժգոհութեամբ թափ տուեց ուսն և յայտնապէս զսպելով բարկութիւնն, ասաց.

— Չեմ կարծում: Նաւակի դեկավար սպան

գործը ճանաչող մարդ է. նա այսպէս շուտ չէր վերադառնայ, եթէ չգտնէր որոնածը:

— Բայց նա չէ երևում նաւակում:

— Պարելի է՛ պառկած է յատակի վրայ, դրա համար էլ չէ երևում... Ասենք, կիմանանք շուտով...

Սե նաւապետն սկսեց ման գալ կամրջի վրայ, շուտ-շուտ կանգ առնելով մօտեցող նաւակին նայելու համար: Վերջապէս նա նայեց հեռադիտակով ու թէպէտ չտեսաւ ազատուածին, բայց դեկավար սպայի հանգիստ և ուրախ դէմքից եզրակացրեց, որ ազատուածը նաւակումն է:

Սե նաւապետի բարկացած դէմքի վեայ գոհութեան ժպիտ երևաց:

Քանի մի ըրպէից յետոյ նաւակը մօտեցաւ »Պառարար«-ի ափին և մարդկանց հետ միասին քաշուեցաւ վերև:

Սպալից յետոյ նաւակի միջից սկսեցին դուրս գալ թիավարները՝ կարմրած, քրտնած, յօգնած ու թիւնից հազիւ հազ շունչ քաշելով: Թիավարներից մէկի օգնութեամբ դուրս եկաւ տախտակամածի վրայ նաև ազատուածը—մի փոքրիկ խափշիկ, տասնամեկ տարեկան, ամբողջովին թրջուած. պատառոտած չապկով, որ ծածկում էր նրա նիհար, ուժասպառ, սև ու փայլուն մարմնի մի փոքր մասը միայն:

Խափշիկը հազիւ էր կանգնում ոտքի վրայ և ցնցուում էր ամբողջ մարմնով. նրա փոս ընկած, մեծ աչքերը նայում էին մի տեսակ անմիտ ուրախութեամբ ու տարակուսանքով. կարծես, նա չէր հաւատում իւր ազատուած լինելուն:

— Նրեխային բոլորովին կիսամեռ դրութեամբ



վերցնեք կայմի վրայից, հաղիւ. ուշքի բերինք խեղ՝  
ձին, զեկուցանում էր նաւակի. հետ զնացող սպան  
նաւապետին:

— Շուտով հիւանդանոց տարէք, հրամայեց նաւապետը:

Երեխային իսկոյն տարան հիւանդանոց, սրբեցին, չորացրին մարմինը, պառկեցրին անկողնի վրայ, ծածկեցին վերամակներով և բժիշկն սկսեց յետ բերել նրան՝ քանի մի կաթիլ կոնեակ տծելով բերանը:

Երեխան աղահուլածամբ կուլ էր տալիս հեղուկը և աղերսական հայեացքով նայում էր բժշկին ցոյց տալով բերանը:

Իսկ վերեւ պարզում էին առադաստներն և հինգ բոլակից յետոյ՝ «Սուււարա»-ը նորից առաջ էր դնում իւր նախկին ուղղութեամբ ու նաւաստիները նորից ձեռք էին առնում ընդհատուած աշխատանքները:

— Փոքրիկ արաբի՝ ազատեցինք, — հնչում էին ամեն կողմից նաւաստիների ուրախ ձայները:

— Նւ ինչպէս երհար է խեղճը, տղերք ջան:

Միքանիսը վաղեցին հիւանդանոց իմանալու, թէ ինչպէս է փոքրիկ արաբը:

— Բժիշկը դեղ է անում. ինչ խօսք, որ կլաւանացնէ:

Մի ժամից յետոյ կայմագէտ նաւաստի Սորչու-նովը լուր բերեց, թէ փոքրիկ արաբը քնած է խոր քնով, բժշկի ձեռքով քանի մի գգալ տաք մսաջուր խմելուց յետոյ:

— Փոքրիկ արաբի համար, տղերք ջան, սպանե-րի խոհարարը դիտմամբ արգանակ եփեց, բոլորովին դատարկ, առանց ոչնչի, հէնց այնպէս, մսի ջուր

միայն, եռանդով չարունակում էր Սորչունովը՝ գոհ այն բանից, որ իրան՝ յայտնի ստախօսին, հաւատում են այս անգամ, նաև այն բանից, որ ինքը սուտ չէ ասում հիմա և որ իրան ականջ են դնում:

Նւ կարծես կամենալով օգուտ քաղել իւր համար այսչափ բացառիկ դրութիւնից, նա չտապով շարունակեց.

— Ֆելզիւրը, տղերք ջան, ասում էր, թէ փոքրիկ արաբն իրանց լեզուով ինչ-որ բան էր բըլբլացնում, երբ որ նրան կերակրում էին. ուրեմն, իբր թէ, խնդրում էր՝ «տուէք, ասում է, աւելի այդ մսաջրից». . . Նւ մինչև անգամ ուղղակի խել բաժակը բժշկի ձեռքից... Բայց թոյլ չտուին: Ուրեմն, ասել է թէ, միանգամից շատ չէ կարելի, հոգիս... Վնաս կպատահի, ասում է:

— Հապա փոքրիկ արաբն ինչ էր անում:

— Ի՞նչ պիտի անէր. հնազանդեց...

Այդ բոլակին ջրով լի կիսատակառին մօտեցաւ նաւապետի սպասաւոր Սոյկինը և վառեց նաւապետի սիգարի մնացորդը: Իսկոյն բոլորեքեան իրանց ուշադրութիւնը դարձրին Սոյկինի վրայ և նաւաստիներից մէկը հարցրեց նրան.

— Արդեօք չէս լսել, Սոյկին, յետոյ ինչ են ուզում անել փոքրիկ արաբին:

Սոյկինը, որ մի չիկաներ, բշտիկաւոր երեսով, պճնասէր, սեպհական բարակ կտորից չապիկ ու պարուսինի կիսակօշիկներ հագած նաւաստի էր, գոռոզութեամբ սիգարի ծուխը դուրս փչելով և քիչ ու միչ տեղեկութիւններ ունեցող մարդու հեղինակաւոր տօնով ասաց. — Ինչ են ուզում անել, Աթոդ-



նեն նրան «Յուսալի» հրուանդանում, երբ որ հաս-  
նենք այնտեղ:

«Յուսալի» հրուանդան նա ասում էր Բարեյու-  
սոյ հրուանդանին:

— Նւ փոքր ինչ լուելուց յետոյ՝ մեծամտաբար  
ու արհամարհանքով աւելացրեց.

— Նւ ինչ էլ կարելի է անել այդ սեռիկ անհա-  
ւատին: Դրանք մինչև անգամ բոլորովին վայրենի  
մարդիկ են...


— Վայրենի են, թէ վայրենի չեն, այդ միևնոյն  
է. չէ՛ որ նա էլ Ասածու ստեղծ է... պէտք է խըղ-  
ճալ... առարկեց ծերունի ատաղձագործ Զախարիչը:

— Զախարիչի խօսքերն ընդհանուր համակրան-  
քով ընդունուեցան ծխողների խմբի կողմից:

— Հապա փոքրիկ արաբն ինչպէս պիտի այն-  
տեղից իւր երկիրն երթայ: Նա է՛լ, երեւի, ազգ ու տակ  
ունի, նկատեց մէկը:

«Յուսալի» հրուանդանում ամեն տեսակ խափ-  
չիկներ չատ կան: Անշուշտ կիմանան, թէ որտեղից  
է նա, պատասխանեց Սոյիկինն և վերջացնելով սիգա-  
րի մնացորդը՝ հեռացաւ ծխողների խմբից:

— Մի ծառայի կտոր է, բայց ի՞նչպէս մեծ  
բան է կարծում իրան, բարկացած խօսեց նրա յե-  
տեից ծերունի ատաղձագործը:



Հետեւալ օրը խափշիկ աղան թէև չատ թոյլ  
էր, այսուամենայնիւ արդէն այնքան կազդուրուել էր  
նհարդային ցնցումից, որ բժիշկը—մի բարեսիրտ  
տարիքաւոր մարդ—ուրախ ժպտալով իւր լայն ժպի-  
տով, փաղաքշաբար շոյեց տղայի երեսն ու մի ամ-  
բողջ բաժակ մսաջուր տուեց նրան, դիտելով միև-  
նոյն ժամանակ, թէ ինչպիսի աղահուլթեամբ կուլ էր  
տալիս նա հեղուկը և յետոյ ինչպիսի չնորհապարտ  
հայեացքով նայում էր իւր մեծ, սև, դուրս ընկած  
աչքերով, որոնց բբերը փայլւում էին ճերմակուցի  
մէջ տեղը:

Սրանից յետոյ բժիշկը կամեցաւ իմանալ, թէ  
ինչպէս է տղան ընկել ուղիւնոտն և որքան ժամա-  
նակ նա քաղցած է մնացել, բայց դուրս եկաւ, որ  
ոյսուկեցել հիւանդի հետ անկարելի է, չնայելով որ  
բժիշկը դիմեց զանազան արտայայտիչ շարժումա-  
ների օգնութեան: Թէև փոքրիկ խափշիկն, ըստ է-  
րևոյթին, աւելի զօրեղ էր բժիշկից անգլխական լեզուի  
մէջ, բայց և այնպէս, բժիշկի նման, նա էլ անխիղճ  
կերպով աղաւաղում էր այն քանի մի տառնեակ  
անգլիերէն խօսքերը, որոնք կազմում էին նրա անդ-  
լիադիտութեան ամբողջ պաշարը:

Նրանք մէկմէկու չէին հասկանում:

Այն ժամանակ բժիշկը Ֆելդշերին ուղարկեց  
մի երիտասարդ սպայի յետեից, որին ամենքը նաւա-  
դահիճում «Պետինկա» էին անուանում:

— Դուք, Պետինկա, լաւ էք խօսում անգլիէ-  
ն



րէն. խօսեցէք, խնդրեմ, սրա հետ. իմ խօսածից բան չէ դուրս գալիս, ծիծաղելով ասաց բժիշկը:— Եւ ասացէք, որ երեք օրից յետոյ ես նրան դուրս կ'ընենք հիւանդանոցից, աւելացրեց բժիշկը:

Ներտասարդ սպան, նստելով տղայի մահճակալի մօտ, սկսեց իւր հարցութիւնները, աշխատելով խօսել կարճ նախադասութիւններով, ծանր ու հատուր-հատոր. և փոքրիկ խափշիկն, բոտ երեւոյթին, հասկանում էր եթէ ոչ բոլորը, ինչ որ հարցնում էր սպան, դոնէ մի մասը, և շտապում էր պատասխանել մի շարք խօսքերով, չմտածելով նրանց կապի մասին, բայց զրա փոխանակ հաստատելով իւր խօսքերն արտայայտիչ շարժումներով:

Բաւական երկարատեւ ու դժուար խօսակցութիւնից յետոյ խափշիկ տղայի հետ, սպան նաւադահլիճում պատմեց նրա պատմութիւնը, որ հիմնուած էր սղայի պատասխանների ու միմիջական շարժումներների վրայ և որ, անշուշտ, գլխաւոր կէտերում միայն կարող էր մօտաւորապէս ճիշտ լինել:

Տղան եղել էր ամերիքական երկկայման «Բետ-սի» նաւի վրայ և նրա նաւապետի (մի ստոր արաբածի, աւելացրեց սպան) սեպհականութիւնն էր: Նա սրբում էր նաւապետի չորերը, կօշիկները և մատուցանում էր նրան սուրճ կօնեակի հետ կամ կօնեակ՝ սուրճի հետ: Նաւապետն իւր ծառային անուանում էր «Բօյ» \*), ուստի և տղան հաւատացած է, թէ «Բօյ» նրա անունն էր: Հօրն ու մօրը նա չէ յիշում: Նաւապետը մի տարի առաջ զնել էր փոքրիկ

խափշիկին Մօզամբիկում և ամեն օր ծեծում էր նրան: Երկկայման նաւը Սենեգալից դնում էր Բիօ, գետի խափշիկներով բեռնաւորուած: Երկու գիշեր առաջ «Բետսի»-ն ընդհարուել էր մի ուրիշ նաւի հետ ու սուղուել ջրի տակը: (Պատմութեան այս մասը սպան հիմնում էր այն հանգամանքի վրայ, որ փոքրիկ խափշիկը մի քանի անգամ ասել էր «կրա, կրա», և յետոյ թոյլ կերպով իւր փոքրիկ բռունցքը խփել էր հիւանդանոցի պատին): Տղան ընկել էր ջուրը, կապիլ էր իրան մի կայմի կտորի և նրա վրա անց էր կացրել, համարեա, երկու օր ու գիշեր...

Բայց ամեն տեսակ խօսքերից—եթէ երեխան կարողանար էլ այդպիսի խօսքեր ասել իւր զարհուրելի կեանքի մասին—անհամեմատ աւելի պերճախօս էին թէ՛ նրա զարմանքը, որ նրա հետ այդպէս քաղցրը են վարւում, թէ՛ նրա ընկճուած կերպարանքը, թէ՛ այդ երախտագիտական հայեացքները, որոնք յիշեցնում էին փոքրիկ, հալածուած չան հայեացքները և որոնցով նա նայում էր բժիշկին, ֆելդշերին, ու սպային և թէ՛, զլխաւորապէս, նրա սպիներով ծածկուած, սե, փայլուն, դուրս ցցուած կողերով ու նիհար մէջքը:

Սպայի պատմութիւնն և բժիշկի ցուցումները զօրեղ տպաւորութիւն գործեցին բոլորի վրայ նաւադահլիճում: Մէկն ասաց, թէ այդ խղճուկին անհրաժեշտ է յանձնել Վապոտունի ռուս հիւպատոսի հովանաւորութեան և ժողովարարութիւն անել նաւադահլիճում յօգուտ փոքրիկ խափշիկի:

Գուցէ աւելի ևս մեծ տպաւորութիւն գործեց փոքրիկ խափշիկի պատմութիւնը նաւապետների վրայ,

\*) Անգլիերէն նշանակում է տղայ, Ծանօթ. Հեղ.



երբ նոյն օրն երեկոյեան անգլիագէտ սպայի ծառան՝ Արտեմի Մուխինը, կամ ինչպէս բոլորեքեան անուանում էին նրան, Արտիւշկան, հաղորդեց սպայի պատմութիւնը նաւաստիներին՝ նրանց սովորական ժողովարանում—տախտակամածի առաջակողմում։ Միևնոյն ժամանակ Արտիւշկան չարախնդաց բաւականութեամբ զարգարեց իւր պատմութիւնը միքանի յաւելումներով, որոնք պիտի հաստատէին, թէ որպիսի դե է եղել այդ ամերիկացի նաւապետը։

—Ամեն օր, տղերք ջան, նա չարչարում էր փոքրիկ արարին։ Ամենաչնչին սլառճառով հասցնում էր քիթ ու բերանին, մէկ, երկու, երեք, ու արիւնլուայ անում խեղճին։ Յետոյ վերցնում էր քաշ արած տեղից մտրակը—իսկ մտրակը, տղերք ջան, այնպիսին էր, որ էլ ինչ ասեմ, ամենահաստ կաշուց—ու տուր թէ կտաս, քերթում էր արաբի կաշին, պատմում էր Արտիւշկան՝ ոգևորւելով սեպհական երեակայութեամբ և փոքրիկ խափշիկ կեանքը ամենազարհուրիկի գոյներով—նկարագրելու ցանկութեամբ։ —Էլ չէր նայում նոյովածը, թէ առաջին անկեզու—անբերան երեխայ է կանգնած, ինչ անենք, որ խափշիկ է... խեղճի մէջքը հէնց հիմա էլ շերտ-շերտ կ'ապտած է... բոխիկն ասում էր, թէ մարդ չէ կարողանում մտիկ տալ, աւելացրեց դիւրագրգիռ ու ոգևորուող Արտիւշկան։

Բայց նաւաստիները, որոնք մի ժամանակ իրանք էլ ստրուկ էին եղել և անձնական փորձով զինտէին, թէ ինչ է նշանակում մտրակի հարուածներ ուտել, առանց Արտիւշկայի յաւելումներին էլ խղճում էին փոքրիկ խափշիկին և ամերիկացի նա-

ւապետի հասցէին ուղարկում էին ամենաչար ցանկութիւններ, եթէ միայն այդ դէին դեռ չեն լափել զայլաձկները։

—Մեզանում արդէն ազատութիւն տուին գիւղացիներին, իսկ այդ ամերիկացիների երկրում ուրեմն ճորտեր կան, հարցրեց մի տարիքաւոր նաւաստի։

—Բանն այն է, որ կան։

—Ջարմանք է... Ազատ ժողովուրդ է... ու ճորտեր կան .. զարմանում էր տարիքաւոր նաւաստին։

—Նրանց մօտ արարները մի տեսակ ճորտեր են, բացատրում էր Արտիւշկան, որ քիչ ու միչ բան էր լսել նրանց մասին նաւադահլիճում։—Հէնց այդ պատճառով էլ նրանց մէջ կուի կայ \*)։ Ամերիկացիների մի մասն ուղում է, որ իրանց երկրում ապրող արարները ճորտ չլինին, ազատ լինին, իսկ միւս մասն այդ բանին համաձայն չէ—այդ նրանք են, որ արար ճորտեր ունին—ու դրա համար էլ ջարդում են իրար այնպէս, որ էլ ինչ ասեմ... միայն պարոններն ասում էին, թէ ճորտերին պաշտպանող ամերիկացիք կյաղթեն, մի տեսակ բաւականութեամբ աւելացրեց Արտիւշկան։

—Ի՜նչ խօսք, որ Աստուած կ'օգնէ նրանց... Արարն էլ կուզէ ազատ ապրել... թուշունը որ թրուշուն է, վանդակ չէ սիրում, իսկ մարդու մասին

\*) Պատմութիւնը վերաբերում է այն ժամանակին, երբ Միացեալ—Նահանգներում ներքին պատերազմ կ'արեւոթ. Հեղ.



խօսելն էլ աւելորդ է, աւելացրեց ատաղձագործ Զախարիչը:

Երիտասարդ, թուխ, նորակոչ նաւաստին, հէնց նա, որ ասում էր, թէ ծովային ծառայութիւնն երկիրդալի բան է, լարուած ուշադրութեամբ խօսակցութիւնը լսելուց յետոյ՝ հարցրեց.—

— Հիմա ուրեմն, Արտիւշկա, այս մեր արաբն ազատ կ'լինի:

— Հապա ի՞նչ էիր կարծում: Յայտնի բան է, ազատ կ'լինի, վճռողաբար ասաց Արտիւշկան, թէ— պէտ ինքն իրան մէջ կատարելապէս հաւատացած չէր, թէ փոքրիկ խափշիկն ազատ կ'լինի՝ ամենին հասկացողութիւն չունենալով ամերիկական օրէնքների մասին՝ սեպհականութեան վերաբերմամբ:

Բայց նրա անձնական նկատումները բոլորովին յօգուտ երեխայի ազատութեան էին: «Ու նաւապետը» հիմա չկայ, ձկներին հիւր է գնացել, ուրեմն էլ ի՞նչ խօսք կարող է լինել:

Նւ նա աւելացրեց.

— Հիմա հարկաւոր է փոքրիկ արաբի համար անցագիր ձեռք բերել «Յուսալի» հրուանդանում: Անցագիրդ ստացիր ու գնա ուր որ ուզում ես:

Անցագրի միջոցով գտած ելքը վերջնականապէս ցրուեց նրա կասկածները:

— Հա, հա, ի՞նչ լաւ կ'լինի, ուրախացած բացականչեց թխագէմ նորակոչ նաւաստին:

Նւ նրա բարի ու վարդազոյն գէմբի վրայ փայլեց մի խաղաղ ու պայծառ ժպիտ, որ արտայայտում էր նրա հոգու ուրախութիւնը փոքրիկ և անբաղդ խափշիկի ազատութեան համար:

Կարճ մթնշողն արագ փոխուեցաւ հրաշալի, անոշ, արևադարձային գիշերի: Երկինքը վառուեց անհամար աստղերով, որոնք պայծառ փայլում էին թաւշանման բարձրութիւնից, Հեռու տարածութեան վրայ ովկիանոսը մթնեց, այն ինչ նաւեզրների մօտ ու յետին կողմում փայլում էր ֆօսֆօրային լուսով:

Հատ չանցած լուեց մի սուլոց, որ կանչում էր աղօթքի. և ապա այն նաւաստիները, որոնք քիչ յետոյ պիտի հերթապահութիւն անէին, բերելով իրանց անկողինները՝ պառկեցին քնելու տախտակամածի վրայ:

Իսկ հերթապահ նաւաստիները՝ թեք ընկած մի տեղ նաւի պարաններին մօտ՝ կիսաձայն խօսակցելով՝ ժամանակ էին անցկացնում: Այս գիշեր շատ խմբերի մէջ նաւաստիների խօսակցութեան առարկան «փոքրիկ արաբն» էր:

V.

Երկու օրից յետոյ բժիշկը, իւր սովորութեան համաձայն, առաւօտուայ ժամի 7-ին եկաւ հիւանդանոց և քննելով իւր միակ հիւանդին՝ տեսաւ, որ նա կազդուրուել է այնքան, որ կարող է վեր կենալ, գնալ վերև և ուտել նաւաստիների կերակուրը: Այս որոշումը նա յայտնեց փոքրիկ խափշիկին աւելի նշաններով, քան խօսքով, և այդ նշաններն այս անգամ շատ հասկանալի էին առողջացած և ուրախացած երեխային, որ, կարծես, արդէն մոռացել էր իւր մահամերձ դրութիւնը, որի մէջ գտնուում էր քանի



մի օր առաջ: Նա արագ վեր ցատկեց անկողնից ու ցանկութիւն յայտնեց գնալ վերև արևի տակ տաքանալու նաւաստու մի այնպիսի երկար, շապիկ հագած, որ, կարծես, նրան պարկի մէջ էին կոխել, բայց բժշկի ուրախ ծիծաղն ու Ֆելդշերի քրքիջը փոքրիկ սևուկի այսպիսի տարօրինակ հանդերձի առթիւ մի քիչ չփոթեցին խափշիկին և նա կանգ առաւ սենեակի մէջ տեղում ու չգիտէր, թէ ինչ անէր. միննոյն ժամանակ նա լաւ չէր հասկանում, թէ ինչու համար բժիշկը քաջջղում է նրա շապիկին ու շարունակում է ծիծաղել:

Այն ժամանակ խափշիկին արագութեամբ հանեց վրայից շապիկն և ուզում էր դուրս պլքուիլ դռնից բոլորովին մերկ մարմնով, բայց Ֆելդշերը բռնեց նրա ձեռքը, իսկ բժիշկը չգաղարելով ծիծաղելուց՝ կրկնում էր.

— Ա՛հ, վա՛, վա՛...

Իւ յետոյ նշանացի հրամայեց խափշիկին նորից հագնել պարկ—շապիկը:

— Ի՞նչ հագցնենք նրան, Ֆրիլպուզի,— երեխայի հոգսը քաշելով հարցնում էր բժիշկը պճնասէր ու գանգրահեր Ֆելդշերին՝ մի երեսնամեայ երիտասարդի.— Այո բանի մասին, եղբայր, մենք պէտք է վաղօրօք մտածէինք:

— Հրամայե՛ք, ձերդ ազնուութիւն, այդ բանի մասին մենք չէրազեցինք: Իսկ եթէ հիմա կտրենք նրա շապիկը, օրինակի համար, մինչև ծնկները և յետոյ, թող ներուի ինձ ասել, կապենք մէջքը զօտիով, այն ժամանակ մինչև անգամ բաւականին «փոխադարձ» կլինի, ձերդ ազնուութիւն, ասաց Ֆելդշերը:

որ մի առանձին սէր ունէր անտեղի խօսքեր զործածելու, մանաւանդ այն ժամանակ, երբ կամենում էր իբր և թէ գեղեցիկ խօսել, կամ ինչպէս նաւաստիներն ասում էին «գրաբար ջարդել»:

— Այսինքն, ի՞նչպէս թէ փոխադարձ, ժպտաց բժիշկը:

— Այնպէս... փոխադարձ: Կարծեմ բոլորեքեան հասկանում են, թէ ինչ է նշանակում փոխադարձ, ձերդ ազնուութիւն, նեղացած պատասխանեց Ֆելդշերը:— Այսինքն՝ յարմար ու լաւ:

— Դժուար թէ դա «փոխադարձ» լինի, եղբայր, ինչպէս որ դու ասում ես: Ծիծաղելի բան կլինի միայն, այ ինչ: Ասենք, թէ մի որևէ բան պիտի հագցնել տղային, մինչև որ նաւապետից թոյլատուութիւն խնդրեմ երեխայի համար չորեր կարելու:

— Կարելի է մինչև անգամ շատ լաւ չորեր կարել տալ... Մեր նաւաստիների մէջ գերձակներ կան, կկարեն:

— Դէ, ուրեմն սարքիւր քո «փոխադարձ» ասածդ չորերը:

Այդ բոպէին հիւանդանոցի դուռը կամաց և զգուշաբար թակեցին:

— Ո՞վ է, ներս արի, կանչեց բժիշկը:

Դուռն մէջ առաջ երևաց մի կարմրագոյն, փոքր ինչ ուռած, տգեղ դէմք՝ չէկ մօրուքով, կասկածելի գոյնի քթով և բորբոքուած, աշխոյժ ու բարի աչքերով, և ապա երևաց կայմադէտ նաւաստի Իւան Աուչկինի ամբողջ փոքրահասակ, չորչրիկ, բաւականին վայելչակազմ ու պինդ մարմինը:

Իսկ մի հասակաւոր նաւաստի էր, մօտ քառա-



սուն տարեկան, որ ծառայել էր նաւատորմի մէջ տասն և հինգ տարի և «Նաւաւարար»-ի ամենալաւ նաւաստիներէից մէկն էր ու միևնոյն ժամանակ ամենասարսափելի արեւցողներէից, երբ ցամաք էր դուրս գալիս: Պատահում էր, որ նա ծովափում լամիչքի էր տալիս իւր բոլոր շորերը և յետ էր դառնում դէպի նաւը միայն սպիտակեղէնով, սպասելով հետևեալ օրուայ պատժին, ըստ երևոյթին, ամենաանհոգ կերպարանքով:

— Ե՛ս եմ, ձերդ ազնւութիւն, ասաց Լուչկինը խզխզացող ձայնով, առաջ գալով մերկ ոտների մեծ թաթերի վրայ և ձիւթոտ ու փշփշոտ ձեռքով քաշքշելով անդրաւարտիքը:

Նրա միւս ձեռքում մի կապոց կար:

Լուչկինը նայում էր բռնիքի դէմքի ու աչքերի այնպիսի ամաչկոտ ու մեղաւոր արտայայտութեամբ, որպէս յաճախ նայում են արեւցողներն և առհասարակ այն մարդիկ, որոնք զգում են իրանց անստաւորութիւնը:

— Զը՛, ի՛նչ ես ուզում, Լուչկին... հիւանդացե՛լ ես ի՛նչ է:

— Ո՛չ, ձերդ ազնւութիւն, ես փոքրիկ արաբի համար չոր եմ բերել... Մտածեցի, թէ մերկ է, արի չորեր կարեմ ու կարեցի, չափան առաջուց առեկ էի: Թոյլ տուէք, ձերդ ազնւութիւն, չորերը տամ տղային:

— Տո՛ւր, եղբայր, տո՛ւր... Շատ ուրախ եմ, ասում էր բռնիքը փոքր ինչ զարմացած: — Մենք հէնց այս րոպէին մտածում էինք, թէ ինչ հագցնենք նւրան, իսկ դու մեզանից առաջ ես մտածել:

— Ազատ ժամանակ կար, ձերդ ազնւութիւն, Կարծես ներողութիւն խնդրելով ասաց Լուչկինը:

Այդ խօսքերից յետոյ նա չթեայ թաշկինակից հանեց քաթանից կարած նաւաստու փոքրիկ չապիկ և նոյնպիսի անդրաւարտիք, թափ տուեց ու տալով ապշած երեխային՝ ուրախ և արդէն ոչ այն մեղաւոր տօնով, որով խօսում էր բռնիքի հետ, ասաց, քաղցրութեամբ նայելով երեխային:

— Ստացիր, Մաքսիմկա: Շորերը, ախպէրս որ դու ես, չատ լաւն են: Հագիր-բարձով մաշես, իսկ ես մտիկ կտամ, թէ ինչպէս է նստում... Ապա Մաքսիմկա, հագիր տեսնեմ:

— Ինչո՞ւ դու նրան Մաքսիմկա ես ասում, ծիծաղեց բռնիքը:

— Բաս ի՛նչպէս, ձերդ ազնւութիւն: Մաքսիմկա է, ի հարկ է: Քանի որ նրան սուրբ Մաքսիմ նահատակի տօնին ազատեցինք, ուրեմն անունը Մաքսիմ էլ պիտի լինի... Մէկ էլ որ փոքրիկ արաբն անուն չունի, մի կերպ պիտի անուանենք թէ չէ:

Տղայի ուրախութեանը չափ չկար, երբ նա հագաւ նոր ու մաքուր չորերը: Երևում էր, որ այդպիսի լաւ չորեր երբէք չէր հագել իւր կեանքում:

Լուչկինը գնեց իւր ձեռագործն ամեն կողմից, քաշքշեց, հարթեց, ուղղեց չապիկն ու եկաւ այն եզրակացութեան, որ չորերին էլ խօսք չկայ:

— Դէ՛, հիմա վերեւ գնանք, Մաքսիմկա... Տաքացիր մի քիչ արևի տակ: Թոյլ տուէք, ձերդ ազնւութիւն:

Բռնիքը, որի դէմքը փայլում էր բարի ժպիտով, զլխով արաւ և նաւաստին, բռնելով խափշիկի



ձեռքից, տարաւ նրան վերև, տախտակամածի առջակողմն և ցոյց տալով ընկերներին՝ ասաց.

— Ահա և Մաքսիմիան: Էլ ինչ ասել կուզէ, որ հիմա մտքից կհանէ ամերիկացի զինն. զիտէ՛ որ ողոս նաւաստիները չեն նեղացնի իրան:

Նա սիրալիր հայեացքով մի քանի անգամ կամացուկ խփեց տղայի ուսին ու մատնանիչ անեւելով նրա գանգրահեր գլուխն՝ ասաց.

— Յետոյ, եղբայր, գլխարկ էլ կլարենք... ոտնամաններ էլ կտարբենք, մի քիչ համբերիր միայն:

Տղան ոչինչ չէր հասկանում, բայց նայելով նաւաստիների արևառ երեսներին, նրանց կարեկցական ժպիտներին, նա զգում էր, որ իրան չեն նեղացնի:

Նա ուրախութիւնից բաց էր անում իւր սալիտակ, փայլուն ատամները՝ տաքանալով հարուստ այն հայրենական արևի ջերմ ճառագայթների տակ:

Այդ օրուանից ամենքն սկսեցին Մաքսիմիա անուանել նրան:

## VI.

Ներկայացնելով ընկերներին նաւաստու տարազով հագցրած փոքրիկ խափչիկին՝ Իւան Լուչկինն իսկոյն յայտնեց, թէ պիտի «մտիկ անէ» Մաքսիմիային և թէ վերցնում է նրան իւր առանձին հովանաւորութեան տակ, համարելով, որ այդ իրաւունքը պատկանում է բացառապէս իրան արդէն

այն հանգամանքի գորութեամբ, որ ինքն է տղային շորեր հագցրել և տուել է նրան, ինչպէս ինքն էր ասում, «օրինաւոր անուն»:

Իսկ թէ այդ տանջուած, նիհար, փոքրիկ խափչիկը, որ իւր մատաղ կեանքի հէնց առաջին տարիներում այսքան վիշտ էր տեսել ամերիկացի նաւապետից, արտասովոր կարեկցութիւն զարթեցրեց միայնակ, ազգական ու բարեկամից զուրկ նաւաստու սրտում—որի կեանքը, մանաւանդ առաջ, նոյնպէս շատ էլ քաղցր չէր եղել—և ցանկութիւն ծնեցրեց նրա մէջ հնար եղածին չափ հաճելի դարձնել խափչիկի կեանքը «Պոռուարը»-ի վրայ՝ այս հանգամանքի մասին Լուչկինը ոչ մի խօսք բաց չթողեց բերանից: Ռուս հասարակ մարդկանց սովորութեան համաձայն, նա ամաչում էր ուրիշների առաջ իւր սիրտը բանալուց և, երևի, հէնց այդ պատճառով Մաքսիմիային «մտիկ տալ-ու» ցանկութիւնը բացատրեց նաւաստիներին բացառապէս այն հանգամանքով միայն, թէ «փոքրիկ արարը զուարճալի արարած է ու, կարծես, կապիկ լինի, տղերք ջան»:

Այսուամենայնիւ, յամենայն դէպս, ազգու հայեացք ձգելով յայտնի կուռարար Պետրով նաւաստու վրայ, որ սիրում էր վիրաւորել անխօս ու երկչոտ նորակոչներին, բաւականաչափ վճռողական կերպով յայտարարեց, որ եթէ գտնուի մէկը, «ուզողակ առած, մի այնպիսի ստոր ու անպիտան մարդ», որ նեղացնէ որբիկին, այն ժամանակ նա գործ կունենայ իրան՝ Իւան Լուչկինի հետ:

— Էլ ասել չի ուզում, քիթ ու պուռնկն այն—



պէս կջարդեմ, որ ինքն էլ հաւաքին, աւելացրեց նա, կարծես, կամենալով բացատրել, թէ ինչ է նշանակում իրան հետ գործ ունենալ:

— Երեխային նեղութիւն տալը մեծ մեղք է... ինչ էլ որ լինի նա—կնքուած, թէ անկեղծաբար արարի տղայ—մէկ է, էլի երեխայ է... Եւ ոչ ոք թող չհամարձակուի նրա խաբրին դիպչել, եղբայրացիք իւր խօսքը Լուչիկին:

Բոլոր նաւաստիները հաճութեամբ ընդունեցին Լուչիկին յայտարարած իրաւունքը Մաքսիմկայի վրայ, թէպէտ և կային այնպիսիները, որոնք չէին հաւատում, թէ Լուչիկինը կարողանայ ժողովեամբ կատարել կամաւորապէս յանձն առած բազմահոգ պարտականութիւնը:

— Ո՛րտեղից կարող է, ասում էին նրանք, այդ արբեցողը, այդ տակառի երկրպագուն մօիկ անել երեխային:

Եւ տարեքաւոր նաւաստիներից մէկը հաղիւ նկատելի ծաղրով հարցրեց նրան.—

— Ուրեմն դու, Լուչիկին, ուզում ես ծծամայր դառնալ Մաքսիմկային:

— Հա՛, հա՛, ծծամայրի տեղը պիտի բռնեմ, պատասխանեց անմեղ ծիծաղով Լուչիկինը, ուշադրութիւն չդարձնելով ծաղրական ժպիտների վրայ... Ես ծծամայր չեմ կարող դառնալ ինչ է: Խօսմ պարոնի տղայի համար չպիտի ծծամայրութիւն անեմ... Զէ՛ որ այդ սեռիկին էլ հագցնել կուզէ... մի ուրիշ ձեռք չոր հարկաւոր կլինի կարել փոխնորդի համար, ոտնամաններ պէտք են, գլխարկ պէտք է... Բժիշկը պիտի խնդրէ, որ հարկաւոր կտրեղէնը տան մեր նա-

ւի պահեստից... Թող Մաքսիմկան բարի անունով յիշէ ռուս նաւաստիներին, երբ որ թողնեն նրան „Յուսալի“ հրուանդանում: Ոչինչ որ չլինի, գոնէ, մերկ չի մանգայ:

— Բայց, Լուչիկին, դու ինչպէս պիտի խօսիս այդ արար տղայի հետ: Ոչ դու նրա ասածը կհասկանաս, ոչ նա քոնը:

— Մի վախենա, հնարքը կգտնենք. ու յետոյ, կտեսնէք, այնպէս կսկսենք խօսել, որ քի՜նդ գայ, մի տեսակ անբացատրելի համոզմունքով բացականչեց Լուչիկինը:— Ուզի՞ղ է, արարի տղայ է, բայց խելացի է... Ես նրան, տղիք ջան, չուտով մեր լեզուով խօսել կսովորեցնեմ... նա կհասկանայ:

Եւ Լուչիկինը քաղցրութեամբ նայեց փոքրիկ խափչիկին, որ, նաւեզրի մօտ կուչ եկած՝ հետաքրքրութեամբ չորս կողմն էր նայում:

Եւ խափչիկը, նկատելով նաւաստու սիրալիր ու քաղցր հայեաքը՝ իբրև պատասխան, ատամները բանալով, նոյնպէս ժպտաց իւր լայն շնորհապալատ ժպիտով, առանց խօսքերի հասկանալով, որ այդ նաւաստին նրան բարեկամ է:

Երբ ժամի տասնեմէկ ու կիսին աւարտուեցան առաւօտուայ բոլոր աշխատանքները և դրանից յետոյ դուրս բերին ու դրին տախտակամածի վրայ արաղի տակառն ու երբ երկու աւագ—ենթասպաներն և ութ ենթասպաները, բոլորուելով արաղի շուրջը սուլեցին արաղի հրաւերը, որ նաւաստիները սրամտաբար անուանում էին „ստիպալի երգ“— Լուչիկինը ուրախ-ուրախ ժպտալով, մատնացոյց առաւ երեխային իւր բերանն ու ասաց, չկանց այս-



տեղ, Մաքսիմիա՞ և վազեց լայնտեղ, ուր դրուած էր տակառը, թողնելով խափշիկին տարակուսանքի մէջ:

Ասենք, երեխայի տարակուսանքը շուտով փառատուեցաւ:

Արադի սուր հոտը, որ տարածուեց ամբողջ տախտակամածի վրայ, և նաւաստիների գոհ ու լուրջ դէմքերը, որոնք վերադառնալիս սըբում էին բեխերն իրանց ձիւթոտ ու փշփշոտ ձեռներով, փոքրիկ խափշիկի միտը ձգեցին այն հանգամանքը, որ «Իստի»-ի վրայ էլ չաբաթը մի անգամ մի-մի բաժակ ու՞մ էին տալիս նաւաստիներին, որ նաւապետը ու՞մը խմում էր ամենայն օր և, ինչպէս թւում էր երեխային, խմում էր աւելի՞ քան հարկաւոր էր:

Լուչկինը, որ արդէն վերադարձել էր Մաքսիմիայի մօտ և մի մեծ բաժակ արագ խմելուց յետոյ բարի տրամադրութեան մէջ էր, ուրախ ու կամայով խփեց տղայի մէջքին և, ըստ երևոյթին, կամենալով հաղորդել նրան իւր հաճելի տպաւորութիւնները, ասաց. —

— Բ՛ճն արագ է, վերի՛—գուտ չնապս, Մաքսիմիա:

Մաքսիմիան համակրանքով թափ տուեց գլուխըն ու ասաց. —

— Վերի — գուտ:

— Հայ դօջադ Մաքսիմիա... Ամեն ինչ հասկանում ես... Իսկ հիմա գնանք, մանչուկա, ճաշ ուտելու... Այլ գիտէ քաղցած ես, հայ:

Նաւաստին նկատելի կերպով չարժեց ծնօտնէլը,

Այդ էլ դժուար չէր հասկանալ, մանաւանդ երբ երեխան տեսաւ, որ ներքեից, մէկը միւսի յետեից, դուրս էին գալիս նաւաստիների խմբապետները, ձեռներին բռնած բաւականաչափ մեծ փայտեայ գշեր, լի կաղամբաթթուի արգանակով, որից համեղ գոլորչի էր բաձրանում ու գրգռում մարդու ախորժակը:

Եւ փոքրիկ խափշիկը բաւականին պերճախօս կերպով թափահարեց գլուխն և նրա աչքերը փայտեցին ուրախութեամբ:

— Տեսնո՞ւմ ես, ամեն ինչ հասկանում է: Խելացի տղայ է, խօսում էր ինքն իրան Լուչկինը, որ սկսել էր փոքր ինչ կողմնապահութեամբ վերաբերուել գէպի փոքրիկ խափշիկն և գէպի իւր ընդունակութիւնը նրա հետ հասկանալի կերպով խօսելու: Նաւաստին բռնելով Մաքսիմիայի ձեռքից, տարաւ նրան իւր հետ:

Առագաստի ահագին կտաւներով ծածկուած տախտակամածի վրայ, ոտները ծալած, արդէն նըստոտած էին նաւաստիները փոքր խմբերով—տասներկուական մարդ իւրաքանչիւր խմրում: Նրանք բոլորուել էին կաղամբաթթուի տաք արգանակով լի գշերի շուրջը, որի (կաղամբաթթուի) պաշարը վերցրել էին Վրօնշտադից և լուռ ու ծանր, ինչպէս սովորաբար ուտում են ոռոս հասարակ մարդիկ, խմում էին արգանակի ջուրն ու հետն էլ ուտում թրջած բարսիմաթ:

Զգուշութեամբ տնցնելով ճաշողների միջից՝ Լուչկինը Մաքսիմիայի հետ միասին մօտեցաւ իւր խմբին, որ տեղաւորուած էր առաջին և միջին կայ-



մերի մէջ տեղում ու դառնալով իւր ընկեր նաւաստիներին, որոնք սպասելով Լուչիլինին դեռ չէին սկսել ճաշել՝ ասաց.—

—Տղերք, խմբի մէջ կընդունէք Մաքսիմկային:

—Խնչ հարցնելու բան է, նստիր արաբի հետ միասին, պատասխանեց ծերունի ատաղձագործ Ջախարիչը:

—Կարելի է կան ուրիշները, որոնք... Ասացէք, տղերք, նորից հարցրեց Լուչիլինը:

Բոլորը միաբերան պատասխանեցին, թէ թճոյ փոքրիկ արաբն իրանց խմբի մէջ լինի և իրարու սեղմուեցան, որ երկուսին էլ տեղ բաց անեն:

Եւ ամեն կողմից լսուեցան կատակի ձայներ.—

—Մի վախենա, քո Մաքսիմկադ բոլոր կերակուրը չի ուտի:

— Ոչ էլ բոլոր աղ-դրած միսը:

—Փո աւրաբի համար մինչ մինչև անգամ գըղալ ենք պահել:

—Ես, տղերք ջան, հարցնում եմ նրա համար, որ նա արաբ է, անկնունք ուրեմն, ասաց Լուչիլինը տեղաւորուելով գլխի մօտ և նստեցնելով իւր մօտ Մաքսիմկային.— Միայն թէ, ես իմ խելքովս այնպէս եմ դատում, սր ասածու համար բոլորն էլ հաւասար են... բոլորն էլ հաց են ուզում ուտել...

—Հապա ինչպէս, 'իհնարկէ: Բոլորն էլ աշխարհիս վրայ Աստծու ստեղծածներն են... ու նա չէ ջնկում մէկին միւսից: Բոլորովին անխելք մարդ պիտի լինի, որ ուրիշ տեսակ մտածէ, այն ինչպէս էն ծառայի կտոր Սոյկինը, որ յիմար-յիմար գուրս

է տալիս անհաւատների մասին, նորից խօսեց Ջախարիչը:

Նրեւում էր, որ բոլորն էլ համաձայն են Ջախարիչի կարծիքին: Ի գուր չէ, որ ռուս նաւաստիները զարմանալի ներողամտութեամբ են վերաբերում ամեն տեսակ ցեղի ու կրօնի պատկանող մարդկանց, որոնց հետ պատահում են նրանք:

Խմբի վերաբերմունքը Մաքսիմկային կատարելապէս մտերմական ու սիրալիր էր: Մէկը տուեց նրան փայտի գդալ, միւսը մօտեցրեց թրջած բաքսիմաթ և ամենքն էլ քաղցրութեամբ էին նայում հանդարտ նստած երեխային, որ, ըստ երևոյթին, սովոր չէր մի աւանձին ուշադրութեան սպիտակամորթ մարդկանց կողմից, և կարծես այդ քաղցր հայեացքներով նաւաստիները սիրտ էին տալիս նրան, որ չվախենայ:

—Է՛հ, շատ լաւ, բայց ժամանակ է և սկսելու, թէ չէ արգանակը կ'սառչի, նկատեց Ջախարիչը:

Բոլորեքեան խաչակնքուեցան ու սկսեցին խումիլ արգանակի ջուրը:

—Գու ինչո՞ւ չես ուտում, Մաքսիմկա: Կներ, անխելք: Համեղ արգանակ է: Գուտ արգանակ, ասում էր Լուչիլինը ցոյց տալով գդալը:

Բայց փոքրիկ խափշիկը, որին „Բէտտի“ ի վրայ երբէք թոյլ չէին տալիս ուտել սպիտակների հետ և որ կերակրւում էր մնացորդներով միայնակ, մի որ և է մութ անկիւնում, վախենում էր, թէ և ագահաբար մոտիկ էր տալիս արգանակին ու թուրք կուլ տալիս:



— Ի՞նչպէս վախկոտ է է՛: Սրբեում է, այն դե-  
— ամբրիկացին վախեցրել է երեխայի աչքը, ասաց  
Ջախարիչը, որ նստած էր Մաքսիմկայի կողքին:

Նւ այս խօսքերն ասելով՝ ծերունի ատաղձա-  
գործը չոյեց Մաքսիմկայի գանգրահներ գլուխն ու  
գդալը մօտեցրեց նրա բերանին...

Սրանից յետոյ Մաքսիմկան դադարեց վախե-  
նալուց և մի քանի ընդմիջում արդէն եռանդով  
ուտում էր և՛ արգանակը, և՛ կարտած միսը, և՛ իւ-  
ղով խաշիւր:

Իսկ Լուչկինը յաճախ գոլում էր նրան ու  
կրկնում:

— Ա՛յ եդ բօն է, Մաքսիմկա: Աւերի-գուտ,  
ախպէր ջան: Կներ, անո՛ւշ լինի:

## VII.

Ամբողջ նաւի վրայ լսելի է ձաշից յետոյ հան-  
գըստացող նաւաստիների խնկոցը: Քնած չեն միայն  
հերթապահներն ու մեկը կամ միւսը տնտեսագէտ  
նաւաստիներից, որ կամենալով օգուտ քաղել ազատ ժա-  
մանակից՝ կօշիկ է ձեռնում իւր համար, չափիկ է կա-  
րում կամ հանդերձի որևէ մասը կարկատում:

Իսկ „Սուռալար“ը գնում է ու գնում իւր  
համար օրհնեալ պասսատի\*) հետ և հերթապահ

\*) Պասսատ այնպիսի քամի է, որ շարունակ, ամ-  
բողջ տարուայ ընթացքում, փչում է միևնոյն ուղղու-  
թեամբ: Պատահում է Ատլանտեան և Խաղաղ Աֆրիկանոս-  
ներում: Ծանօթ. Հեղ.

նաւաստիներն ամենեւին գործ չունին կատարելու  
մինչ այն ժամանակ, քանի չէ երևացել մըրկաբեր  
ամպիկ ու չէ ստիպել նաւաստիներին առժամանակ  
հաւաքել առաջաստները, որպէս զի նաւը տրօպի-  
քական ուժգին քամուն և յորդուատ անձրեւին հան-  
դիպի արդէն պատրաստուած, այսինքն մերկ կայմե-  
րով, նրանց կատարութեան առաջ դնելով դիմագ-  
րութեան ամենափոքր տարածութիւն:

Բայց հօրիգոնը մաքուր է: Ոչ մի կողմից չէ  
տեսնւում այն փոքրիկ մոխրագոյն բիծը, որ արագ-  
արագ աճելով, մօտենում է նաւին՝ իբրև ահագին  
սև ամպ և ծածկում հօրիգոնն ու արևը: Քամու  
ահաւոր չունչը կողքի է ծռում նաւը, անուշիկ հե-  
ղեղը չրփչրփում է տախտակամածի վրայ, թըջում է  
ամեն ինչ մինչև վերջին թելը ու նոյնպէս արագ,  
որպէս եկել էր, անցնում, գնում է հեռու: Նա աղ-  
մուկ հանեց, անձրև թափեց ու անյայտացաւ:

Նւ նորից պարզ ու պայծառ փայլում էր ա-  
րևը, որի ճառագայթներն արագութեամբ չորացնում  
են և՛ տախտակամածը, և՛ պարանները, և՛ առա-  
գաստները, և՛ նաւաստիների շապիկները: Ու նորից  
կապուտակ երկինքն անամպ է, ովկիանոսը խաղաղ,  
որի վրայից վազում է նաւը մեղմաչունչ պասսատից  
մղուած ու նորից առաջաստները պարզած:

Նորից խաղաղ է չորս կումը, Խաղաղ է և նա-  
ւի վրայ, „Նաւաստիները հանգստանում են“: Նւ  
այդ ժամանակ չէ կարելի, առանց որևէ ծայրահեղ  
պատճառի, անհանգստացնել նրանց—այսպէս է վաղ  
ժամանակներից մնացած սովորութիւնը նաւերի վրայ:  
Առաջին կայմի ստուերում նստած՝ չէ բնում



այսօր և Լուչկինը 'ի դարմանս հերթապահ նաւաստիներէի, որոնք շատ լաւ գիտեն, թէ որպիսի „զօւ“ քնող է Լուչկինը:

Քթի տակ մի երգ մըմուտով, որի խօսքերը չէր կարելի ջոկել, Լուչկինը պարուսիցի կտորից ոտնամաններ էր ձևում և երբեմն-երբեմն նայում իւր մօտ ձգուած ու քաղցր քնած Մաքսիմկային, նայում էր աւելի նրա սպիտակ անդրալարտիքի միջից դուրս եկած սև ոտներին, կարծես, իւր մէջ հաշտի առնելով, թէ ուղիղ է արդեօք այն չափսը, որ նա առել էր այդ ոտներից անմիջապէս ձախց յետոյ:

Ըստ երևոյթին, դիտողութիւնները բոլորովին հանգստացնում են նաւաստուն և նա շարունակում է աշխատել, այլ ևս ուշադրութիւն չդարձնելով փոքրիկ, սև ոտներին վրայ:

Նւ մի ինչ-որ ուրախ ու ջերմ գգացմունք է տիրում այդ անսանձ արքեցոյի հոգուն, երբ նա մտածում է, թէ ինքը „առաջին տեսակի“ ոտնամաններ կկարէ այդ խեղճ ու անտէր տղային ու կպատրաստէ նրա համար ամեն բան, ինչ որ հարկաւոր է: Դրանից յետոյ ակամայից յիշում է նա իւր ամբողջ կեանքը նաւաստու պաշտօնում, որ ներկայացնում էր բաւական միակերպ պատկեր անչափ, անկշիռ արքեցութեան և ծեծի արքունական շորերը խմբի տալու համար:

Նւ Լուչկինը ոչ առանց հիմունքի եզրակացնում է, որ եթէ ինքը չլինէր մի քաջ նաւաստի, որի անվահանութիւնը հիացնում էր բոլոր նաւապետներին ու աւագ սպաներին, հիմա վաղուց փթած կլինէր քանտում:

— Ծառայութեանս պատճառով էին խնայում, սոսայ նա լսելի ձայնով, հոգոյ քաշեց ու աւելացրեց. — Հէնց խնդիրն էլ դրանումն է:

Ո՞ր հանգամանքին էր վերաբերում այդ „խընդիրը“, նրան արդեօք, որ նա անձնատուր էր լինում անդուսպ արքեցութեան իւրաքանչիւր անգամ ափ իջնելիս և ոչ մի քաղաքում, բացի Վրօնչտադից, ամենամօտիկ պանդոկից հեռու չէր գնում, թէ՛ այն հանգստանքին, որ նա աներկիւղ նաւաստի էր ու հէնց այդ պատճառով չէր փորձել բանտի համըղժուար էր որոշել: Բայց մի բան անկասկած էր. հարցը մի ինչ—որ դժուար լուծելի „խնդրի“ մասին նրա կեանքում ստիպեց Լուչկինին քանի մի ընդէտով ընդհատել մըմուտը, մտքերի մէջ ընկղմել և վերջ 'ի վերջոյ բարձրաձայն ասել. —

— Փռնօպկայ էլ է հարկաւոր Մաքսիմկային... թէ չէ ինչ մարդ է նա, որ փռնօպկայ չունի: Մի ժամուայ ընթացքում, որ նշանակուած էր նաւաստիների հանգստութեան համար ձախց յետոյ, Լուչկինը կարողացաւ Մաքսիմկայի ոտնամանների համար տակի ու կողքի կաշիներ ձևել: Տակի կաշիները բոլորովին նոր էին, արքունական ապրանքից և դեռ առաւօտեան պարտքով առնուած էին մի տնտեսագէտ նաւաստուց, որ սեպհական կօշիկներ ունէր. միևնոյն ժամանակ, հէնց իրան՝ Լուչկինի առաջարկութեամբ, որ շատ լաւ գիտէր, թէ որքան հեշտութեամբ դատարկում է իւր գրպանը, մանաւանդ ցամաք իջնելիս, „հշտութեան համար“ պարտքի հատուցումը պիտի կատարէր աւագ ենթասպան՝ հանելու վողը նրա ուռհիկից:



Երբ որ լսուեցաւ աւագ— ենթասպայի սուլոցն և դրանից յետոյ Վասիլի Եգորովիչի, կամ ինչպէս անուանում էին նրան նաւաստիները, Եգորիչի հրամայողական ձայնը՝ Լուչկինն սկսեց արթննացնել քաղցր քնած Մաքսիմկային։ Նա թէև կողմնակի ճանապարհորդ է, այսուամենայնիւ, Լուչկինի կարծիքով, պարտաւոր է ասլքել նաւաստու նման, նաւի վրայ ընդունուած կարգ ու կանոնով, որպէս զի, յամենայն դէպս, խուսափած լինի անհաճոյ պատահմունքներէից, որոնք սպասելի էին գլխաւորապէս Եգորիչի կողմից։ Թէպէտ և Եգորիչը, Լուչկինի համոզմամբ, բարի մարդ էր և թակում էր ոչ անտեղի, այլ «լաւ մտածելուց յետոյ», այսուամենայնիւ բաւական ժամանակ կարող էր փոքրիկ արաբի ականջակոթին էլ հասցնել «անկարգութեան» համար։ Ուրեմն ամենից լաւն այն է, որ փոքրիկ արաբն էլ ընտելանայ կարգ ու կանոնի։

— Վեր կաց, Մաքսիմկա, ասում էր քաղցր ձայնով նաւաստին, թափառելով խափչիկի թեւ։

Խափչիկը ձգձգուեց, բաց արաւ աչքերն ու նայեց չորս կողմը։ Տեսնելով, որ բոլոր նաւաստիները վեր են կենում և Լուչկինը հաւաքում է իւր աշխատանքը, Մաքսիմկան շտապով ոտքի կանգնեց և ինչպէս մի հնազանդ շնիկ՝ սկսեց նայել Լուչկինի երեսին։

— Մի վախենա, Մաքսիմկա... Ընչ կայ որ, անխելք... ամեն բանից վախենում է։ Իսկ սրանք ախպէր ջան, քեզ համար ոտնաման կլինին...

Թէև խափչիկն ամենին չէր հասկանում այն ինչ որ ասում էր նրան Լուչկինը, երբեմն մատնա-

ցոյց անելով նրա ոտները, երբեմն պարուսինից ձևած կտորները, այսուամենայնիւ ժպտում էր իւր լայն բերանով, երևի, զգալով, որ իրան մի ինչ— որ լաւ բան են ասում։ Երբ Լուչկինը կանչեց նրան՝ ամենայն վստահութեամբ և հնազանդութեամբ տղան գնաց նաւաստու ետից ամենաստորին տախտակամածը, և այնտեղ հետաքրքրութեամբ նայում էր, թէ ինչպէս Լուչկինը տեղաւորում էր իւր աշխատանքը պարուսինից կարած ճանապարհորդական պայուսակում, որ լիքն էր սպիտակեղէնով ու շորերով։ Եւ յետոյ նորից ոչինչ չէր հասկանում ու երախտազիտաբար ժպտում էր միայն, երբ Լուչկինը հանեց իւր գլխարկն և մատնացոյց անելով երբեմն գլխարկը, երբեմն փոքրիկ խափչիկի գլուխը, իդուր աշխատում էր խօսքերով ու նշաններով բացատրել, թէ Մաքսիմկան էլ կունենայ նոյնպիսի գլխարկ սպիտակ ծածկոյթով ու ժապաւէնով։

Բայց դրա փոխանակ խափչիկն իւր ամբողջ փոքրիկ սրտով զգում էր այդ սպիտակ մարդկանց սիրալիր վերաբերմունքը, որոնք բոլորովին այն լեզուով չէին խօսում, ինչ լեզուով որ խօսում էին սպիտակ մարդիկ «Բէտսի»-ի վրայ։ Զգում էր նա մանաւանդ այդ նաւաստու բարութիւնը, որի կարմիր քիթը նա նմանեցնում էր կարմիր պղպեղի, որի մազերի գոյնը նման էր կանեփի գոյնին և որ այնպիսի հրաշալի շորեր ընծայեց նրան, այնպէս լաւ հիւրասիրեց անուշահամ կերակուրներով և նայում է նրան այնպիսի քաղցր հայեացքով՝ որպէս չէ նա յել ոչ ոք մինչև հիմա, բացի մի գոյգ սև, մեծ, դուրս ընկած աչքերից կանաչի սևամորթ դէմքի վրայ...



Այդ բարի ու քնքոյ աչքերն անմոռաց պահում էին նրա մտքում, որպէս հեռաւոր ու աղօտ յիշողութիւն բանաններով ծածկուած խուղերի ու բարձր արմաւենիների մտապատկերների հետ միասին: Սրապէնր էին արդեօք դրանք, թէ մանկութեան յիշողութիւններ—նա, իհարկէ, անկարող էր բացատրել. բայց այդ աչքերը, պատահում էր, որ երազի մէջ խղճում էին նրան, Հիմա արթուն ժամանակ էլ նա տեսաւ նոյնպիսի բարի ու քաղցրահայեաց աչքեր:

Եւ առհասարակ այն օրերը, որ նա անց էր կացնում «Պռուարար»—ի վրայ, թւում էին նրան այնպիսի անոյշ ցնորքներ, որպիսիք նա տեսնում էր երազում միայն—այնքան նրա այժմեան կեանքը տարբեր էր նախկին տանջանքներով ու անընդհատ երկիւղով լի կեանքից:

Երբ Լուչիկինը՝ կիսատ թողնելով բացատրութիւնները գլխարկի մասին, հանեց պալուսակից մի կտոր շաքար ու տուեց Մաքսիմիային, աղան սաստիկ զգացուեցաւ: Նա բռնեց նաւաստու կոշտ ու փռչփռչոտ ձեռքն և սկսեց երկիւղով ու քնքշութեամբ շոյել այն, նայելով Լուչիկինի երեսին մի այնպիսի սրտաշարժ արտայայտութեամբ, որպէս նայում են հալածուած ու ճնշուած արարածները՝ երբ գուրգուրում ու փայփայում են նրանց: Շնորհակալութեան զգացմունքը փայլում էր թէ նրա աչքերում և թէ դէմքի վրայ... Այդ զգացմունքը լսելի էր նաև այն քանի մի խօսքերի դողդոջուն, կոկորդային ձայների մէջ, որ եռանդով ու ջերմութեամբ արտասանեց աղան իւր մայրենի լեզուով՝ շաքարը բերանը դնելուց առաջ:

—Տեսնում ես, ինչ անոյշ տղայ է, երևի

խեղճը մի քաղցր խօսք չէ լսել ոչ որից, ասաց նաւաստին ամենամեծ քնքշութեամբ, որքան միայն ընդունակ էր արտայայտել նրա խղիւզացող ձայնը և շոյեց Մաքսիմիայի երեսը:—Դէ, կեր շաքարը, համով է, աւելացրեց նա:

Նւ այստեղ, ստորին տախտակամածի այս մութ անկիւնում, երկուստեք խոստովանութիւններից յետոյ, ամրապնդուեցաւ փոխադարձ բարեկամութեան վստախ նաւաստու և փոքրիկ խափչիկի մէջ: Նրկուսն էլ, ըստ երևոյթին, բոլորովին գոհ էին միմեանցից:

—Անպատճառ հարկաւորէ սովորեցնել քեզ մեր լիզուն, Մաքսիմկա, թէ չէ մարդ չէ կարողանում հասկանալ, թէ ինչես բլրացնում դու, սեռկա: Հիմա զնանք վերև: Այս րոպէիս թնդանօթային վարժութիւններ պիտի լինին: Մտիկ կտաս:

Նրանք բարձրացան վերև, Շուտով թմբկահարըն ածեց չհրաւէր դէպի թնդանօթները: և Մաքսիմկան յենուելով կայմին, որպէս զի ոտքի տակ չընկնի, առաջ վախեցաւ՝ տեսնելով նաւաստիներին զլսապատառ իրանց թնդանօթների մօտ վազելիս, քայց յետոյ շուտով հանգստացաւ և հիացած նայում էր, թէ ինչպէս նաւաստիները յետ էին գլորում ահագին թնդանօթները, ինչպէս արագութեամբ կոխում էին նրանց մէջ մաքրիչներն և նորից նաւեզրից դուրս քչելով թնդանօթների փողերը՝ անշարժ կանգնում էին նրանց մօտ: Նրեխան կարծում էր, թէ պիտի արձակեն թնդանօթները և տարակուսած մտածում էր, թէ արդեօք ում վրայ են ուղում արձակել, քանի որ հօրիզոնում ոչ մի նաւ չէր երևում: Նա արդէն ծանօթ էր թնդանօթների արձակմանը և



մինչև անգամ տեսել էր, թէ ինչպէս մի բան շառաչմամբ ջրի մէջ էր ընկել «Բետսի»-ի ետևում, երբ նա քամու ուղղութեամբ առագաստները պարզած, ամենայն ուժով փախչում էր մի ինչ — որ եռակայմնաւից, որ ընկել էր գերի խափշիկներով բռնաւորուած «Բետսի»-ի յետևից, Երեխան տեսել էր բոլորի վախեցած դէմքերը «Բետսի»-ի վրայ և լսել էր, թէ ինչպէս հայհոյանքներ էր թափում նաւապետը մինչ այն ժամանակ, երբ եռակայմ նաւն սկսել էր նկատելի կերպով յետ մնալ: Նա չգիտէր, իհարկէ, թէ դա անգլիական զինուորական նաւերից մէկն էր, որ չըրջում էր գերեզմաններ բռնելու համար, և նոյնպէս ուրախանում էր, որ «Բետսի»-ին յաջողուեց փախչել և այգալիսով նրա հոգեհան նաւապետը չ'բռնուեցաւ ու չ'խախուեցաւ առագաստակալից մարդկային ամօթալի առևտրի պատճառով\*:

\*) Առաջուայ ժամանակներում, երբ գերեզմանաւորութիւնը ծաղկած դրութեան մէջ էր, Եւրոպայի համաբնակչութիւնը տէրութիւններէ համաձայնութեամբ կազմուեցաւ մի միջազգային դաշնադրութեան՝ այդ չարիքէ առաջն առնելու համար: Այս դաշնադրութեան զօրութեամբ Ֆրանսիան և Անգլիան ուղարկում էին իրանց զինուորական նաւերն Աֆրիկայի և Սմերիկայի ափերը՝ գերեզմանաւորներն բռնելու: Բռնուածները լիստ պատժի էին ենթարկւում: Նաւապետին և նրա օգնականին կախում էին, իսկ նաւաստիներին ուղարկում էին առժանային աշխատանքի: Խափշիկներին ազատութիւն էին տալիս և բռնուած նաւերը վրաւում էին, որպէս վարձատրութիւն բռնողներին: Ծանօթ. չեղ.

Բայց Մաքսիմիան ի դուր էր սպասում. թնդանօթները չարձակեցին: Դրա փոխանակ տղան հիացմամբ լսում էր թմբկահարութիւնն և շարունակ նայում էր Լուչկինին, որ կանգնած էր նաւի առաջակողմի թնդանօթի մօտ և որպէս թնդանօթաձիգ՝ յաճախ կռնում էր նշան բռնելու:

Վարժութիւնները տեսարանը չատ դուր եկաւ Մաքսիմիային, բայց պակաս դուր չեկաւ նաև այն թէյը, որ խմեցրեց նրան Լուչկինը վարժութիւններից յետոյ: Առաջ Մաքսիմիան ապչեց, երբ տեսաւ, որ բոլոր նաւաստիները ֆուֆուացնում են եփջուրը փոքրիկ թասերով, կծում են շաքարն ու լողանում քրտնքի մէջ: Բայց երբ Լուչկինը նրան էլ տուեց մի թաս թէյ ու շաքար, Մաքսիմիան համն առաւ ու խմեց երկու թաս:

Ինչ վերաբերում է ռուս լեզուի առաջին դասին, որ սկսեց Լուչկինը նոյն օրն երեկոյեան՝ երբ չորն անցաւ և երբ նաւաստու ասելով, «հնչ էր բան հասկանալ», պէտքէ ասել, որ նրա սկիզբը մի առանձին արդիւնք չէր խոստանում և շարժում էր նաւաստիների ծիծաղը, երբ տեսնում էին նրանք Լուչկինի ապարդիւն ջանքերը հասկացնելու իւր աշակերտին, թէ նրա անունը Մաքսիմիա է, իսկ ուսուցչին՝ Լուչկին:

Այսուամենայնիւ Լուչկինը, թէպէտ երբեք մանկավարժ չէր եղել, ցոյց տուեց այնպիսի համբերութիւն, այնպիսի տոկունութիւն ու փափկութիւն իւր ձգտման մէջ, ինչ կերպ էլ որ լինի, դնելու, այսպէս ասած, ուսուցման առաջին հիմնաքարը — որպիսին նա համարում էր անունն իմանալը — որ նրա այդ յար-



կուլթիւններին կարող էին նախանձուել վկայուած մանկավարժները, որոնց—այս էլ պէտք է աւելացնել—հազիւ թէ պատահին այնպիսի դժուարութիւններ, որպիսիներին ստիպուած էր յաղթել նաւաստին։

Հնարելով շատ կամ քիչ սրամիտ միջոցներ իւր մտադրուած նպատակին հասնելու համար՝ Լուչկինն իսկոյն գործադրում էր նրանց։

Նա մատը դնում էր փոքրիկ խափչիկի կրծքին ու ասում. «Մաքսիմկա», յետոյ մատնանիչ էր անում իրան ու ասում. «Լուչկին»։ Նրկնելով այդ փորձը միքանի անգամ և չհասնելով բաւարար հետեանքի, Լուչկինը հեռանում էր միքանի քայլ և աղաղակում. «Մաքսիմկա»։ Տղան բաց էր անում առամենիւրը, բայց չէր իւրացնում և այդ մեթոդը։ Այն ժամանակ Լուչկինը հնարեց մի այլ եղանակ։ Նա խնդրեց նաւաստիներէջ մէկին աղաղակել «Մաքսիմկա», և երբ նաւաստին աղաղակեց, Լուչկինը մի տեսակ բաւականութեամբ, որ զգում է իւր ձեռնարկած գործի յաջողութեանն անպայման հաւատացած մարդը, մատնացոյց արաւ Մաքսիմկային և նրան աւելի լաւ համոզելու համար՝ զգուշութեամբ թափահարեց օձիքը։ Աւանդ, Մաքսիմկան ծիծաղեց ուրախացած, բայց, աւններ և, որ այդ թափ տալն ընդունեց որպէս հրաւէր պարգալու, որովհետեւ իսկոյն ոտքի թռաւ ու սկսեց պար դալ, որով ընդհանուր բաւականութիւն պատճառեց հաւաքուած նաւաստիներին և հէնց իրան Լուչկինին։

Երբ պարը վերջացաւ՝ փոքրիկ խափչիկը շատ լաւ հակվացաւ, որ իրանից գոհ մնացին, որովհետեւ նաւաստիներից շատերը կամացուկ խփում էին նրա

ուսին, մէջքին, գլխին և ուրախ ծիծաղելով ասում. —

— Գուտ, Մաքսիմկա, կեցցես, Մաքսիմկա։

Դժուար է ասել, թիւնքան յաջողութիւն կուենեային Լուչկինի հետեակ փորձերը ծանօթացնելու Մաքսիմկային նրա անուան հետ—փորձեր, որոնց պատրաստում էր կրկնել Լուչկինը—բայց անգլիերէն խօսող սպայի երևալը նաւի առաջակողմում բաւականաչափ հեշտացրեց գործը։ Նա բացատրեց տղային, թէ նա «Բոյ» չէ, այլ Մաքսիմկա և իդէպ ասաց, թէ Մաքսիմկայի բարեկամի անունն էլ Լուչկին է։

— Հիմա, եղբայր, նա գիտէ արդէն քո դրածդ անունը, ասաց սպան դառնալով Լուչկինին։

— Շատ շնորհակալ եմ, ձերդ ազնւութիւն, պատասխանեց ուրախացած Լուչկինն ու աւելացրեց, — թէ չէ ես, ձերդ ազնւութիւն, երկար ժամանակ չարչարում էի... Տղան խելացի է։ այսուամենայնիւ չէր կարողանում ոչ մի կերպ հասկանալ, թէ ինչ է իւր անունը։

— Հիմա գիտէ... Ապա հարցրու։

— Մաքսիմկա։

Փոքրիկ խափչիկը մատնացոյց արաւ իրան։

— Այ ինչ լաւ բան դուրս եկաւ, ձերդ ազնւութիւն... Լուչկին, նորից դարձաւ նաւաստին երեսային։

Երեսան մատով ցոյց տուեց նաւաստուն։

Երկուսն էլ սկսեցին ուրախ—ուրախ ծիծաղել։ Ծիծաղում էին և նաւաստիներն ու նկատում. — Փոքրիկ արարը սովորել է սկսում...

Մնացած դասը շատ հեշտութեամբ անցաւ։



Լուչիկներ ցոյց էր տալիս զանազան առարկաներ ու տալիս էր նրանց անունը, միևնոյն ժամանակ, եթէ ամենափոքր հնարաւորութիւն էր լինում աղաւաղելու բառը, աղաւաղում էր. փոխանակ ասելու «չապիք», ասում էր «չապի», փոխանակ ասելու «վարտիք», ասում էր «վարտի», հաւատացած լինելով, որ խօսքերի այսպիսի փոփոխութեամբ՝ նրանք անելի նմանում են օտար լեզուի բառերին և անելի հեշտ կարող են մնալ Մաքսիմկայի մտքում:

Երբ որ խուհեցաւ ընթրիքի սուկոյցը՝ Մաքսիմկան արդէն կարողանում էր Լուչիկների հետ կրկնել ուսուցիչին քանի մի խօսք:

— Կեցցէս, Լուչիկին, ձեռաց սովորեցրիք փոքրիկ արաբին: Ո՛վ գիտէ մինչև «Յուսալի» հրուանդանը սկսէ հասկանալ մեր լեզուն, ասում էին նաւաստիները:

— Եւ այն էլ ինչպէս կհասկանայ: Մինչև «Յուսալի» հրուանդանը 20 օրուայ ճանապարհ է... իսկ Մաքսիմկան հասկացող տղայ է:

«Մաքսիմկա» խօսքի վրայ՝ տղան նայեց Լուչիկին:

— Տեսնում ես, լաւ մրտն է պահել անունը... նստիր, եղբայր, իրիկնահաց պիտի ուտենք:

Աղօթքից յետոյ, երբ անկողինները բաժանեցին, Լուչիկներ պառկեցրեց Մաքսիմկային իւր մօտ տախտակամածի վրայ: Երջանիկ ու շնորհապարտ Մաքսիմկան ձգձգում էր նաւաստու ներքնակի վրայ, զուլիւր դրած բարձին և վերմակը քաշած վրան: Այս բոլորը խնդրել ու ստացել էր Լուչիկներ նաւի տնտեսական մասի կառավարիչ սպայի օգնականից, որ

փոքրիկ խափշիկի համար պահեստից բաց էր թողել ներքնակ իւր բոլոր պարագաներով:

— Քնիր, քնիր, Մաքսիմկա, վաղը չուտ պիտի վեր կենանք:

Բայց Մաքսիմկան առանց դրան էլ քնում էր՝ առաջին դասը բաւականին յաջող կրկնելուց յետոյ. «Մաքսիմկա և Լուչիկի» — այսպէս էր փոխել նա իւր դաստիարակի ազգանունը:

Նաւաստին խաչակնքեց փոքրիկ խափշիկին և չուտով արդէն նրա խնկոցը լսելի էր նաւի ամբողջ տարածութեան վրայ:

Կէս գիշերին նա վեր կացաւ հերթապահութիւն անելու և աւագ կայմադէտ նաւաստու՝ Լէօնտի հետ բարձրացաւ կայմի փոքրիկ հրապարակը:

Այնտեղ նրանք նստեցին, նախապէս նայելով, թէ կարգին է արդեօք ամեն ինչ և սկսեցին զրոյց անել, որ քունը չյաղթէ իրանց, Խօսեցին Կրօնչտադի մասին, յիշեցին հրամանատարներին... ու լռեցին:

Յանկարծ Լուչիկներ հարցրեց.

— Ասա, խնդրեմ, Լէօնտի, դու երբէք խմիչքի չեմ տարուել:

Միշտ զգաստ, ծանրաբարոյ ու կարգապահ Լէօնտի, որ յարգում էր Լուչիկինին, որպէս անվահեր ու բանիմաց նաւաստու և միևնոյն ժամանակ փոքր ինչ արհամարհում էր նրան արբեցողութեան համար, զրականապէս պատասխանեց.

— Ո՛չ մի ժամանակ իմ կեանքում:

— Ուրեմն երբէք բերանդ է՛լ չես առել:

— Տօներին, պատահած ժամանակ, խմել եմ մի բաժակ:



— Հը՛, դրա համար էլ դու քո բաժին արադդ չես խմում. ուրեմն արադի փողերը պահճում ես էլի:

— Փողը, եղբայր, աւելի հարկաւոր բան է... Երբ որ Ռուսաստան վերադառնանք ու պաշտօնից դուրս գամ, փողով միշտ կարելի է գործ տեսնել:

— Ի՛նչ ասել կ'ուզէ...

— Բայց դու ինչո՞ւ արադի մասին խօսք բացիր, Լուչիկին:

— Նրա համար, որ դու, Լէօնտե ... խորհրդաւոր նաւաստի ես. .

Լուչիկինը լռեց փոքր ինչ ու յետոյ նորից հարցրեց.

— Ասում են, թէ կարելի է թուղթ ու գիր անել արեւցողութեան դէմ:

— Անում են ուրիշները... ուղիղ ես ասում... «Վոսպիկ»-ի վրայ մի նաւաստու համար թուղթ ու գիր արեց ենթասպան... գիտէր հնարքը... մեր մէջ էլ կայ այդպիսի մարդ .

— Ո՞ր:

— Ատաղձագործ Ջախսրիչը: Միայն նա ծածուկ է պահում. ամենքի համար չի անի: Իսկ դու միթէ ուզում ես յետ կենալ արեւցողութիւնից, Լուչիկին, ծաղրելով հարցրեց Լէօնտե:

— Յետ կենալ. յետ կենալ չէ, այլ գոնէ այնպէս լինի, որ չորեքս չ'տամ խմիչքի...

— Փորձիր խմել խելացի կերպով...

— Քանի՞ անգամ եմ փորձել: Ոչինչ չէ՛ դուրս գալիս, եղբայր: Հէնց որ ձեռքս խմիչք է ընկնում, էլ պրծնա՛ւ բռնա, չեմ կարողանում չափ պահպանել... իմ բաղդիցն է...

— Բա՛ղդ. խելք չունիս կատարեալ, ոչ թէ բաղդ, ազդու կերպով նկատեց Լէօնտե: Ամեն մարդ պիտի հասկանայ իւր արածը. Այսուամենայնիւ՝ խօսիլ էլի Ջախսարիչի հետ, կարելի է, չմերժէ. . բայց հաղիւ թէ նրա թուղթ ու գիրն օգնէ քեզ, աւելացրեց ծաղրելով Լէօնտե:

— Բանն էլ հէնց դրանումն է, ես էլ այդպէս եմ կարծում: Զի՛ օգնի նրա թուղթ ու գիրը, ասաց Լուչիկինը ու ինքն էլ ժպտաց, կարծես զո՛ւ այն հանգամանքից, որ թուղթ ու գիրը չէ կարող ազդել նրա վրայ:

## VIII.

Անցաւ երեք շաբաթ և թէպէտ «Վառարար»-ը հեռու չէր Վասպուրականից, բայց հասնել այնտեղ չկարողացաւ: Ցուրտ, անդուրեկան քամին, որ փչում էր, ինչպէս ասում են ծովագնացները, ուղիղ մարդու ճակատին և որ ժամանակ առ ժամանակ հասնում էր փոթորկի աստիճանին, թոյլ չէր տալիս, որ նաւը մօտենայ ափին: Միևնոյն ժամանակ քամին և ալիւկ-ծուլիւնն այնքան սաստիկ էին, որ մտածելն անգամ աւելորդ էր չոգիտլ ատաջ դնալու մասին: Իզուր միայն ածուխ կծախսուէր:

Նւ եղանակի փոփոխութեան սպասելով՝ «Վառարար»-ը, առազաստները հաւաքած, կանգնած էր ափից ոչ հեռու և արագութեամբ կողքից կողք էր ընկնում:

Այսպէս անցաւ վեց-եօթն օր:

Վերջապէս քամին դադարեց, «Վառարար»-ի չոգեմեքենան վառեցին և շատ չանցած՝ նաւը, իւր



սպիտակ ծխնելոյլից ծուխ արձակելով, ուղևորուեց դէպի Կապուտուն:

Աւելորդ է ասել, թէ որքան ուրախ էին ծովագնացներն ավին մօտենալու պատճառով:

Բայց կար մի մարդ նաւի վրայ, որ ոչ միայն չէր ուրախանում, այլ ընդհակառակը, որքան «Կուռաբար»-ը մօտենում էր ավին, այնքան աւելի տխրում էր ու մռայլում:

Դա Լուչիինն էր, որ մտածում էր Մաքսիմլայից բաժանուելու մասին...

Այս ամառայ ընթացքում, երբ Լուչիինը, հակառակ ընկեր-նաւաստիների ակնկալութեան, չէր դադարում Մաքսիմլային խնամելուց, նա հոգով կապուեց երեխայի հետ և փոքրիկ խափշիկն էլ իւր կողմից սիրեց նաւաստուն: Նրանք շատ լաւ հասկանում էին միմեանց, որովհետեւ Լուչիինը ցոյց տուեց զարմանալի մանկավարժական ընդունակութիւն, իսկ Մաքսիմլան բաւականաչափ հասկացողութիւն, այնպէս որ երեխան մի կերպ կարողանում էր հասկացնել իւր միտքը ուսուցիչին: Որքան աւելի մօտիկ ծանոցում էին նրանք միմեանց, այնքան աւելի սերտ բարեկամ էին դառնում: Արդէն Մաքսիմլան երկու ձեռք չորսիւր ունէր, ունէր նաև ոտնամաններ, գլխարկ և նաւաստու գանակ՝ քաշ արած գօտիկից: Նա խելացի և ուրախ տղայ դուրս եկաւ ու դարձաւ բոլոր նաւաստիների սիրելին: Մինչև անգամ աւագ-ենթասպայ Եգօրիչը, որ ասում էր կողմնակի ուղևորներին, երբ այդպիսիք լինում էին նաւի վրայ, որպէս անգործ մարդկանց, շատ սղորմածաբար էր վերաբերում դէպի Մաքսիմլան, որովհետև տղան աշխա-

տանքի ժամանակ միշտ ուրիշների հետ միասին ձգում էր նաւի թոկերը և առհասարակ աշխատում էր որ և է բանով օգնել միւսներին ու, այսպէս ասած, ձրի չուտել նաւաստու բաժին հացը: Պարանի սանդուղքներով բարձրանում էր նա կապիի ճարպիկութեամբ, իսկ փոթորկի ժամանակ ամենաչնչին երկիւղ անգամ չէր ցոյց տալիս. մի խօսքով, ամեն բանով «ծովային տղայ» էր:

Չափազանց բարի ու քաղցրաբարոյ, նա երբեմներբեմ գուարճացնում էր նաւաստիներին իւր սլաքերով ու հայրենի երգերով, որ երգում էր բարձր ու հնչուն ձայնով: Այս պատճառով բոլորն էլ փայփայում էին նրան, իսկ անզլիպէտ սպայի ծառայ Արտիչկան ժամանակ առ ժամանակ շաքարահաց էր բերում նրան սպաների սեղանատան մնացորդներից:

Ասելն անգամ աւելորդ է, որ Մաքսիմլան հոգով անձնատուր էր եղած Լուչիինին, որպէս չնիկն իւր տիրոջը. միշտ նրա հետ էր և միշտ, ինչպէս ասում են, նրա երեսն էր մօտիկ տալիս: Որտեղ Լուչիինն էր, այնտեղ էր և Մաքսիմլան. և՛ կայմի փոքրիկ տախտակամածն էր բարձրանում, երբ Լուչիինը հերթապահ էր լինում այնտեղ, և՛ նաւախելի վրայ պահապան էր նստում Լուչիինի հերթի ժամանակ, և՛ եռանդով աշխատում էր արտասանել ուսուցիչին խօսքերը...

Յամարի ժայռոտ ավերն արդէն լաւ երևում էին... «Կուռաբարն»-ն աւաջ էր դնում իւր ամբողջ ուժով: Ճաշի ժամանակ պէտք է խարխուսէ ձգէին Կապուտունի առաջ:

Ուրախ չէր Լուչիինն այդ գեղեցիկ, սլայծա-



առաւօտին և մի առանձին եռանդով մտքը ունէր  
թնդանօթը: Լուչիկինի մօտ կանգնած էր Մաք-  
սիմիան և օգնում էր նրան:

— Հուտով մնաս-բարով կասե՞նք իրար, եղբայր  
Մաքսիմիա, սկսեց վերջապէս խօսել Լուչիկինը:

— Ինչո՞ւ մնաս-բարով, դարձա՞ցաւ Մաքսիմիան:

— Վիթոլինն քեզ «Յուսալի» հրուանդանում...  
տանին, ինչ անեն...

Նրեկան, որ չէր մտածում իւր ասպաղայ վիճա-  
կի մասին և լաւ չէր հասկանում Լուչիկինի ասածը,  
այսուամենայնիւ նաւաստու գէմքի օխուր արտայայ-  
տութիւնից հասկացաւ, որ նրա ասածը մի ուրախ  
բան չլիտի լինի և տղայի գերաւորութիւն գէմքը, որի  
վրայ արագութեամբ անդրադառնում էին տղաւո-  
րութիւնները, յանկարծ մօայլուց և նա ասաց:—

— Ես չէ՛ հասկանում Լիւչիկի:

— Հայդա, եղբայր, նաւից... Ափում կ'իջո՞ւ-  
նեն քեզ... Ես կ'երթամ հեռու, իսկ Մաքսիմիան  
այստեղ կ'մնայ:

Եւ Լուչիկինը զանազան նշաններով աշխատում  
էր բացատրել, թէ ինչու՞մ է բանը:

Ըստ երևոյթին, փոքրիկ խափշիկը հասկացաւ:  
Նա բռնեց Լուչիկինի ձեռքն և աղերսական ձայնով  
ասաց:—

— Ես ափ չէ ուզում... Ես այստեղ. Մաքսիմ-  
իան Լիւչիկին, Լիւչիկան Մաքսիմիին: Ես ըլուս նա-  
ւաստի... հա՛, հա՛, հա՛: Այդ ժամանակ մի յանկար-  
ծական միտք ծագեց նաւաստու գլխում և նա հարց-  
րեց:—

— Մաքսիմիա, ուզո՞ւմ ես ըլուս նաւաստի...

— Հա՛, հա՛, կրկնում էր Մաքսիմիան և ամբողջ  
ուժով թափ տալիս գլուխը:

— Ա՛յ թէ լաւ բան կ'լինի: Եւ ինչպէս առաջ  
ես գլխի չընկայ... պէտք է խօսել տղերանց հետ ու  
խնդրել Եգօրիչին... նա կ'այտնէ աւագ-սպային:

Քանի մի բոլակից յետոյ Լուչիկինն ասում էր  
տախտակամածի առաջակողմում հաւաքուած նաւաս-  
տիներին:—

— Տղերք, Մաքսիմիան ուզում է մեզ մօտ մնալ:  
Խնդրե՛ք, որ թոյլ տան... Թող ձանապարհորդէ մեզ  
հետ «Նուարար»-ի վրայ, Ի՞նչպէս էք կարծում,  
տղերք ջան:

Բոլոր նաւաստիներն ևս միաբերան հաւանու-  
թիւն տուին այդ առաջարկութեանը:

Դրանից յետոյ Լուչիկինը գնաց աւագ-ենթա-  
սպայի մօտ, խնդրեց նրան զեկուցանել այդ խնդիրը  
աւագ սպային նաւի բոլոր նաւաստիների կողմից ու  
աւելացրեց:—

— Քեզ մատաղ, Եգօրիչ, խօսքս մի՛ կոտրիր,  
կատարիր խնդիրս... Ասա՛ աւագ-սպային... Ասա՛  
Մաքսիմիան ինքն է ուզում... Թէ չէ՛ ինչպէս ձգե՛նք  
խեղճ որբուկին անտէր-անտիրական «Յուսալի»  
հրուանդանում... Նա բոլորովին կարող է կորչել այս-  
տեղ, Եգօրիչ: Ափսոսում եմ երեխային... Լաւ տղայ  
է, կարգապահ տղայ է...

— Ի՞նչ կ'լինի որ... Ես կ'այտնեմ: Մաքսիմիան  
կարգ ու կանոն իմացող տղայ է: Բայց ինչ կասէ  
նաւաստե՞ր... Կհամաձայնի՞ արդեօք արարի կոչումն  
ունեցող խափշիկին թողնել ռուսական նաւի վրայ...  
2-ինի՞ խնդիրը որևէ արգելքի հանդիպի այդ կողմից:



—Ոչ մի արգելքի չէ կարող հանդիպել, Եզորիչի Մենք Մաքսիմկային կհանենք արաբական կոչումից:

—Ի՞նչպէս թէ «կհանենք»:

—Կմկրտենք ռուս հաւատի, Եզորիչի, և նա կը լինի ռուս կոչման խափշիկ:

Այդ միտքը դուր եկաւ Եզորիչին և նա խոստացաւ անյապաղ յայտնել աւագ սպային:

Աւագ սպան լսեց Եզորիչի զեկուցումն ու նըկատեց.—

—Երեւի, Լուչկինն է աշխատում Մաքսիմկայի համար:

—Բոլոր նաւաստիները նոյնպէս խնդրում են փոքրիկ արաբի համար, ձերդ ազնւութիւն... Նթէ ոչ, մօր թողնենք նրան: Խղճում են... Իսկ նա կարող էր մեզ մօտ պատրաստուել նաւաստի դառնալու, ինքզա լինել, ձերդ ազնւութիւն: Համարձակու՞մ կ'մ յայտնել, որ փոքրիկ արաբը կարգապահ տղայ է: Եւ եթէ նրան մկրտենք, կարող ենք, ուրեմն, և մի հոգի փրկել...

Աւագ սպան խոստացաւ յայտնել նաւապետին: Գրօչակի բարձրացնելու ժամանակ նաւապետն եկաւ վերին տախտակամածը: Երբ աւագ սպան հաղորդեց նրան նաւի բոլոր նաւաստիներին խնդրը՝ նաւապետն առաջ կամենում էր մերժել, բայց յետոյ, երեւի, յիշելով իւր երեխաներին, իսկոյն փոխեց վճիռն ու ասաց.

—Լաւ, թող մնայ: Առ այժմ նրան ինքզա կը չինենք... Իսկ երբ վերադառնանք Կրօնշտադ՝ մի բան կանենք նրա համար... Եւ յիրաւի, ինչո՞ւ ձգենք նրան անտէր, մանաւանդ որ նա ինքն էլ չէ ուզում

մեզանից հեռանալ... Թող Լուչկինը խնամատար լինի նրան... Ջարհուրելի արբեցող է այդ Լուչկինը, բայց տեսէք... ինչպէս կապուել է երեխայի հետ... Ինձ բժիշկը պատմեց, թէ ինչպէս նա չորեր է կարել խափշիկի համար...

Երբ տախտակամածի առաջակողմում տարածուեց Մաքսիմկայի մնալու թոյլտուութեան լուրը՝ բոլոր նաւաստիները սաստիկ ուրախացան: Բայց, իհարկէ, ամենից աւելի ուրախանում էին Լուչկինն ու Մաքսիմկան:

Ցերեկուայ ժամի 1-ին նաւը խարխաւ ձգեց Կապտոսուրի նաւահանգստում և երկրորդ օրը նաւաստիների առաջին խումբը թոյլտուութիւն ստացաւ ափ իջնելու: Պատրաստուեց դնալու և Լուչկինը Մաքսիմկայի հետ:

—Մտիկ արա, Լուչկին, խմիչքի չտան Մաքսիմկային, ծիծաղելով նկատեց Եզորիչը:

Այդ նկատողութիւնն, ըստ երևոյթին, ծակեց Լուչկինի սիրտը և նա պատասխանեց.

—Կարելի է, Մաքսիմկայի պատճառով ես իսկի էլ չիմեմ:

Թէպէտ Լուչկինը վերադարձաւ ափից թունդ արբած, բայց, իզարմանս ընդհանուրի, նրա չորերից ոչ մէկը պակաս չէր: Ինչպէս յետոյ երևեցաւ, այդ բանը պատահել էր շնորհիւ Մաքսիմկայի, որովհետեւ երբ փոքրիկ խափշիկը նկատում է, որ իւր բարեկամը չատ է խմում, իսկոյն վազում է հարեան գինեատուն և կանչում ռուս նաւաստիներին, որոնք վերցնելով Լուչկինին, տանում են նաւամատոյց ու



դնում նաւակի մէջ, որտեղ Մաքսիմկան անբաժան  
մնում է նրա մօտ:

Լուչկինը հազիւ էր պատեցնում լեզուն բերա-  
նում և շարունակ կրկնում էր. —

— Ո՞րտեղ է Մաքսիմկան: Բերէ՛ք Մաքսիմկա-  
յին... Նա նրան, իմ Մաքսիմկային, խմիչքի չեմ տուել,  
տղերք ջան... Նա իմ առաջին բարեկամն է... Ո՞ր-  
տեղ է Մաքսիմկան:

Նւ երբ Մաքսիմկան մօտեցաւ. Լուչկինին, նա  
խկոյն հանգստացաւ ու շուտով քնեց:

Մի չարաթից յետոյ «Վռուարար»-ը հեռացաւ  
Բարեյուսոյ հրումանդանից և շատ չանցած ճանապարհ  
ընկնելուց յետոյ, Մաքսիմկան հանդիսաւոր կերպով  
մկրտուեցաւ և երկրորդ անգամ անուանուեցաւ Մաք-  
սիմկա: Նաւի անունով նրա ազգանունը դրին «Զա-  
րիսակին» (Վռուարարեանց):

Ներք տարուց յետոյ, երբ Մաքսիմկան «Վռուա-  
րար»-ի վրայ հասաւ Սրօնշտադ, արդէն տասնհնորս  
տարեկան պատանի էր և շատ լաւ կարգում ու գրում  
էր ռուսերէն՝ չնորհիւ «Պետինկա» սպայի, որ պա-  
րապում էր նրա հետ:

Նաւապետը չմոռացաւ հոգալ խափշիկի մասին  
և տուեց նրան Ֆելդշերների ուսումնարանը. իսկ  
Լուչկինը, դուրս գալով ծառայութիւնից, մնաց Սրօնշ-  
տադում, որպէս զի մօտիկ լինի իւր որդեգրին, որին  
նա նուիրելից իւր սրտի ամբողջ սէրն և որի համար  
առ իսկ խմիչքի չէր տալիս շորերն, այլ խմում էր  
«Բերեցի կերպով»:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.



4258

2073



